21 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2010 ԵՐԵՔՇԱԲԹԻ 235 (4615)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Միացյալ Նահանգներ՝ շահերի՞, թե՞ արդարության ուղիով

*Նենսի Փելոսին ենթարկվում է ճնշումների՝ Հայոց ցեղասպանության բանաձեւը քվեարկության չդնելու պահանջով*

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Միացյալ Նահանգների Ներկայացուցիչների պալատն այսօր կարող է քվեարկել Հայոց ցեղասպանության բանաձեւի առնչությամբ, որ պետք է քվեարկության դրվեր դեռեւս նախորդ շաբաթավերջին: Քվեարկության հավանական օրը, դեկտեմբերի 17-ին, Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն իր նախաձեռնությամբ հեռախոսազրույց է ունեցել ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի հետ՝ պահանջելով, որ Միացյալ Նահանգների վարչակազմը «մաս դառնա հայկական բանաձեւի հանդեպ ուղղված ջանքերին»:

Թուրքական «Անադոլու» գործակալության տեղեկացմամբ, Դավութօղլուն հեռախոսազրույցում ընդգծել է, թե ԱՄՆ վարչակազմը պետք է քայլեր ձեռնարկի՝ հայկական բանաձեւը քվեարկությունից հանելու հարցում: Քլինթոնն, ըստ նույն աղբյուրի, հավաստիացրել է Դավութօղլուին, թե Միացյալ Նահանգների վարչակազմը կարեւորում է ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունները, եւ որ ամեն մի ջանք կգործադրվի Հայկական բանաձեւը ԱՄՆ ներկայացուցիչների պալատի օրակարգ չմտցնելու համար:

Այս տարվա մարտին Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւի քվեարկությամբ այն կարող է մտնել Ներկայացուցիչների պալատ եւ դրվել քվեարկության: Ամեն դեպքում, ուրբաթ օրը չկայացած քվեարկության փոխարեն Ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսին կարող է երեքշաբթի կրկին դնել քվեարկության:

Թուրքական լրատվամիջոցներն էլ ամենայն մանրամասնությամբ են անդրադարձել ու մեկնաբանել ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի կողմից Հայոց ցեղասպանության բանաձեւի հնարավոր քվեարկությանն ու ընդունմանը: Մասնավորապես, «Hyurriyet Daily News»-ը դեռեւս շաբաթ օրը նշել էր, թե Ցեղասպանության բանաձեւի քվեարկությունը կարող է հավանական համարվել, ընդ որում՝ ավարտվել բանաձեւի ընդունմամբ: Ընդ որում, այդպիսի կարծիք է հայտնել «Արդարություն եւ բարգավաճում» իշխող կուսակցության փոխնախագահ Սուաթ Քընըքլըօղլուն, նշելով, որ եթե բանաձեւը հասնի մինչեւ պալատի քվեարկությանը, կընդունվի:

Թուրքական պարբերականի դիվանագիտական աղբյուրները, սակայն, հավաստիացնում են, թե Օբամայի վարչակազմը լուրջ ճնշումներ է գործադրում Նենսի Փելոսիի վրա՝ թույլ չտալու օրակարգային դարձնել բանաձեւի քվեարկությունը: «Որքան ժամանակը շատ անցնի, այդքան ճնշումը Փելոսիի վրա կուժեղանա», նշում են թուրքական դիվանագիտական աղբյուրները: Ամեն դեպքում, հետաքրքրական է, որ միակ դժվար հարց է դիտարկվում բանաձեւը քվեարկության դնելը, քանի որ բանաձեւի ընդունման հավանականությունը «հենվում է» նաեւ վերջերս Թուրքիայի հանդեպ ոչ դրական վերաբերմունքի վրա, մասնավորապես ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում:

ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման, ի տարբերություն պետքարտուղար Քլինթոնի, անուղղակի է անդրադարձել ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններին, որեւէ կերպ չտալով Հայոց ցեղասպանության բանաձեւի անունը, այլ WikiLeaks կայքէջի գաղտնազերծած փաստաթղթերի առնչությամբ էլեկտրոնային հարցազրույց տալով «Հյուրիեթին»:

*Տես էջ 8*

# Նախագահ Սարգսյանն իր համար փակեց մի էջ եւ բացեց նորը

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Ճիշտն ասած՝ ՀՀԿ 20-ամյակի հանդիսությանը նախագահ Սարգսյանի ելույթին հասարակությունը սպասում էր՝ մի քանի հարցերի վերաբերյալ սպառիչ պատասխաններ ստանալու առումով, սակայն չի կարելի ասել, որ բոլոր հարցերի պատասխանները ստացվեցին. մի քանի հարցեր նույնքան անհասկանալի մնացին, որքան եւ ելույթից առաջ. օրինակ՝ քաղաքապետի հրաժարականը հետեւա՞նք էր, թե՞ պատճառ, կամ ԲՀԿ առաջնորդից նախագահ Սարգսյանը հստակեցում պահանջե՞լ է, թե՞ ոչ: Բայց շատ հարցեր վերջակետ ու բացատրություն ունեցան: Բոլոր դեպքերում այս՝ վերջին ելույթը, նախորդած (տարբեր ձեւաչափերով եւ առիթներով) ելույթների հետ մեկտեղ, ազդարարեց, որ երկրի նախագահը ինքն իր համար փակեց մի էջ եւ բացել է նորը, որտեղ գործելու է նպատակասլաց, առանց սխալվելու իրավունքի եւ ուժգնությամբ ու ծավալով համարժեք քայլերով: Ասենք միայն, որ այս դեպքում սայթաքել չի կարելի, սայթաքումը ընթացք եւ շարունակություն կկասեցնի, ինչի վտանգավորությունը միայն անսանձ ձիու վրա երբեւէ եղած մարդը կարող է հասկանալ: Այլ խոսքով՝ նախագահը մուտք գործեց նախընտրական ժամանակի մեջ՝ իր եւ ՀՀԿ-ի համար:

Գնահատելով Աշոտ Նավասարդյանին, Վազգեն Սարգսյանին եւ Անդրանիկ Մարգարյանին՝ նրանց անունները շահարկողներին հասկացրեց՝ նրանց երազած Հայաստանն իրողություն դարձնելու հնարավորությունն ու պարտավորությունը նաեւ իրենն է, ու հենց իրենն է, ու ինքը գործի է անցնում: Ներքին քաղաքական կայունություն ապահովող հսկա կոնգլոմերատին՝ ՀՀԿ-ին սպառնացող վտանգը՝ կարծրացման, դինամիկայի թուլացման, կանգնած ջրերի ճահճանալու մասին «**Ազգը**» եւս բազմիցս մատնանշել է, բայց որ դա հնչում էր արդեն կուսակցության ղեկավարի շուրթերից, եւ դա գովելի էր, ՀՀԿ-ն մոդեռնանալու կարիքն ունի՛: Սակայն դեղատոմսը նրա առաջարկած ընդհանուր ֆրազների մեջ շատ տեսանելի չէ, միայն երեւում է մտմտուքը՝ «անելու է առանց բացառությունների եւ վերապահումների». «Մի կողմից մենք պետք է բացառենք հեղափոխական ցնցումները, որ ոչ մի երկրի բարօրություն չեն բերել երբեք, մյուս կողմից մենք պետք է բացառենք տեղում դոփելու վտանգը, պետք է նոր բարձր տեմպ հաղորդենք մեր քայլերին: Մեր ճանապարհը ոսկե միջինն է»:

*Տես էջ 2*

# Պորեբան «տեսած եւ զգացած» վերադառնում է Եվրոպա

Նախագահ Սերժ Սարգսյանն երեկ ընդունել է Եվրոպական խորհրդարանի պատգամավոր, Հայաստանի հարցերով հիմնական զեկուցող Տոմաշ Պորեբային:

Նախագահը ողջունել է զեկույցի նախապատրաստման ընթացքում պատգամավոր Տոմաշ Պորեբայի այցը Երեւան եւ Ստեփանակերտ, որը, նախագահի համոզմամբ, տեղում իրավիճակին ծանոթանալու, գնահատելու, անմիջական շփումների եւ տեղեկություններ ստանալու տեսանկյունից չափազանց կարեւոր է: «Յուրաքանչյուր գնահատական, յուրաքանչյուր մոտեցում, ի վերջո, նպատակաուղղված է տվյալ երկրին, տարածաշրջանին օժանդակելուն, առկա խնդիրների լուծմանն ու բարեփոխումներին աջակցմանը: Եվ մենք վստահ ենք, որ Ձեր զեկույցը հենց այդպիսին է լինելու», երկրի ղեկավարի մամուլի գրասենյակի փոխանցմամբ՝ ասել է **Սերժ Սարգսյանը**:

**Տոմաշ Պորեբան** նշել է, որ առանց տվյալ երկիր այցելության, անհնար կլիներ համակողմանի ու անաչառ զեկույց ներկայացնել: Նա կասկածից վեր է համարել նաեւ Լեռնային Ղարաբաղ այցելության կարեւորությունը, քանի որ տարածաշրջանային հարցերում այն էական նշանակություն ունի: «Ես օգտակար տեղեկություններ ստացա եւ տեղում տեսա ու զգացի իրավիճակը: Այդ ամենը զեկույցում ներառելուց բացի, մտադիր եմ տպավորություններս փոխանցել Եվրոպական խորհրդարանի իմ գործընկերներին», ասել է Տոմաշ Պորեբան՝ Հայաստանի նախագահի հետ հանդիպմանը քննարկելով նաեւ Հայաստանի եւ եվրոպական կառույցների համագործակցության հարցեր:

Հ. Ա.

# Քեզ տեսնենք, Ասանժ

Ինչպես տեղեկացնում է «Գազետա.ռու»-ն, Դավոսի Համաշխարհային տնտեսական համաժողովի նախագահ **Կլաուս Շվաբը** հայտարարել է, որ ցանկանում է գալիք տարի համաժողովին հրավիրել WikiLeaks-ի հիմնադիր Ջուլիան Ասանժին: «Իրականում ես պետք է հրավիրեմ Ասանժին՝ համաժողովին մասնակցելու: Սակայն նրա հնարավոր մասնակցությունը բարդանում է այն հանգամանքով, որ Ասանժը իրավունք չունի լքելու Անգլիան: Ինչեւէ՝ մենք կսպասենք մինչեւ շվեդական արդարադատությունը արդարացնի նրան», ասել է Շվաբը: Հիշեցնենք՝ Շվեդիան մեղադրանք է ներկայացրել Ջուլիանին՝ սեռական բնույթի հանցագործություններ կատարելու հիմքով: Ասանժը դեկտեմբերի 7-ին Սքոթլանդ Յարդ ինքնակամ ներկայացավ եւ դեկտեմբերի 15-ին Լոնդոնի դատարանի, այնուհետեւ՝ Բարձրագույն դատարանների որոշմամբ գրավի դիմաց ազատվեց: Հունվարի 11-ին Լոնդոնի դատարանը կորոշի՝ հանձնել Ջուլիանին Ստոկհոլմին, թե ոչ: Ինչ վերաբերում է Դավոսի Համաշխարհային տնտեսական համաժողովին, ապա այնտեղ, վստահաբար Ասանժի ներկայությունը չի խանգարի: Ամեն տարի ձմռանը շվեյցարական այս քաղաքում հավաքվում են համաշխարհային քաղաքական ու տնտեսական գործիչներ, եւ քննարկում համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարներն ու առկա մարտահրավերների չեզոքացման ծրագրերը: 2011-ին Դավոսի 41-րդ համաժողովը նախատեսվում է անցկացնել հունվարի 26-30-ը, եւ եթե Լոնդոնը Ասանժին չհամաձայնի հանձնել Շվեդիային ու նաեւ լիարժեք ազատ արձակի, կամ դա անի արդեն շվեդական դատարանը, ապա որոշ ժամանակ անց «համաշխարհային տնտեսության ներբությունները հայտնի կդառնան յուրաքանչյուրին, ով համացանցով կբացի WikiLeaks-ը»:

Հ. Ա.

# Հակաօդային պաշտպանության հայ-ռուսական հրամանատարական կետ

Հայաստանի զինված ուժերի հակաօդային պաշտպանության զորքերի եւ Հայաստանում տեղակայված ռուսական 102-րդ ռազմակայանի համագործակցությամբ բացվել է հակաօդային պաշտպանության համատեղ հրամանատարական կետ, որը ի զորու է գերժամանակակից սարքավորումներով վայրկյանների ճշգրտությամբ գրանցելու օդային սահմաններին սպառնացող վտանգը եւ համակարգված կերպով կառավարելու օդային թիրախների խոցումը: ՊՆ մամուլի ծառայությունից հայտնում են, որ հակաօդային պաշտպանության համատեղ հրամանատարական կետի բացման արարողությանը ներկա է եղել նաեւ ՀՀ պաշտպանության նախարար **Սեյրան Օհանյանը**: Կարեւորելով հակաօդային պաշտպանության համատեղ հրամանատարական կետի բացումը՝ Սեյրան Օհանյանը նշել է, որ դա Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ ռազմական համագործակցության որակական նոր հարթություն է եւ խոսում է երկու երկրների հարաբերությունների ռազմավարական բնույթի մասին: Նա մասնակցել է նաեւ ՀՀ զինված ուժերի հակաօդային պաշտպանության զորամասերից մեկի բնակային շինությունների բացման արարողությանը, ծանոթացել զորանոցային պայմաններին ու գերճշգրիտ S-300 զենիթահրթիռային համակարգերի աշխատանքին: Սեյրան Օհանյանն այցելել է նաեւ ռազմական արդյունաբերության ձեռնարկություններից մեկը եւ ծանոթացել ռազմական ինքնաթիռների վերանորոգման նորակառույց արտադրամասի պայմաններին:

Հ. Ա.

**ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԵՐԴՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ**

# Վարչապետը լռում է, Գերասիմ Ալավերդյանն էլ հերքում պաշտոնանկության մասին լուրերը

Քաղաքապետի երդման արարողության ժամանակ, որին մասնակցում էր նաեւ հանրապետության նախագահը, «Նոր փոփոխություններ սպասվո՞ւմ են գործադիրում» հարցից հետո վարչապետ **Տիգրան Սարգսյանը** լուրը չհաստատեց, սակայն չհերքեց էլ. ընդամենը դիվանագիտական պատասխան տվեց. «Ժամանակը կգա, եւ կառավարությունում կատարվելիք փոփոխությունների մասին կիմանաք»:

Կառավարությունում տեղի ունեցած փոփոխությունները արդարադատության նորանշանակ նախարար **Հրայր Թովմասյանին** ստիպել են այլեւս չզբաղվել իր սիրած գործով. չի կարողանա կնոջ հետ շրջել սուպերմարկետում եւ գնումներ կատարել. ժամանակը չի բավականացնում:

«Երեկ կնոջս հետ էի խոսում եւ ասում, որ այսուհետեւ ինքն է գնումներ կատարելու: Դա իմ սիրած գործն էր, տուն գալուց առաջ զանգում էի ու հարցնում՝ ինչ պետք է գնել այսօր», անկեղծացավ Հրայր Թովմասյանը:

«**Ազգ**»-ի հարցին՝ «Որն է լինելու առաջին քայլը, եւ ինչի՞ն է ուշադրություն դարձնելու», նախարարն ասաց, որ նախ պետք է համակարգին ծանոթանա: Գլխավոր նպատակներից է կաշառակերության դեմ պայքարը: Դրան կարելի է հասնել պետական չինովնիկի եւ քաղաքացու անմիջական շփումները նվազագույնի հասցնելով:

«Դա վերաբերում է նաեւ քրեակատարողական հիմնարկներին», ասաց նախարարը: Թովմասյանը հավաստիացնում է, որ նախարար նշանակվելուց հետո իր մարդկային հատկանիշներն ու անձնական որակները չեն փոխվել:

«Ինչպես լինում է մարդ, այնպես էլ մնում է, ու անսկզբունքային մարդը չի կարող դառնալ հակառակը: 40 տարեկան դարձած անսկզբունքային մարդը չի կարող փոխվել կամ լավ մարդը չի կարող վատը լինել: Հետեւաբար նախարար դառնալուց հետո իմ անձնական որակները չեն փոխվի»:

Մինչ Հրայր Թովմասյանը նոր պաշտոնին է հարմարվում, գյուղատնտեսության նախարարը հերքում է իր պաշտոնանկության մասին լուրերը:

«Նման բան չկա, սուտ է, որ այդ խոսակցություններին հավատայինք, այժմ աշխատանքի չպետք է լինեինք», ասաց նա:

**Պրն. Ալավերդյանը** պաշտոնից հրաժարվելու մասին խոսակցությունները «անլուրջ» է որակում՝ հավելելով, որ «Օրինաց երկիր» կուսակցությունում պաշտոնից հրաժարվելու կամ չհրաժարվելու մասին ոչ մի քննարկում չի եղել:

«Հրաժարականի մասին խոսակցություններն իրենց մեջ լրջության ոչ մի էլեմենտ չունեն», ասաց նա:

Հ. Հ.

## Ընթացիկ

# Նախագահ Սարգսյանն իր համար փակեց մի էջ եւ բացեց նորը

*1-ին էջից*

Շատ լավ: Իսկ ի՞նչ է ոսկե միջինը. մեր կարծիքով՝ մարտի 1-ին առնչվող եւ բանտերում նստած մարդկանց ազատ արձակում, եւ նախ եւ առաջ՝ Նիկոլ Փաշինյանի: Ոսկե միջինը երկխոսության հարթակներ գտնելն է ընդդիմադիր բոլոր միավորների հետ ամենատարբեր հարցերի շուրջը, Հանրապետականի առանձնահատուկ դերով հանդերձ: Բայց եթե դա միայն կարգախոս է, ինչպես վերջին երեք տարում բազմիցս եղել է, այդ կարգախոսն արդեն սպառել է գործի դնելու բոլոր առիթները, իսկ եթե գործի է դրվելու, ապա մինչեւ նոր տարի պիտի գործի դրվի՝ վերստին չիմաստազրկվելու համար: Ուրեմն՝ նախ բանտարկյալները...

Դե իսկ առաջընթացի թիվ մեկ խոչընդոտ կաշառակերության եւ կոռուպցիայի դեմ պայքարի խնդիրը լուծելու առումով երեւի Վրաստանի մասին բերված օրինակը



(Նախագահն, իհարկե, երկրի անունը չի նշել) Նախագահ Սարգսյանը հեքիաթ չի համարել, ինչպես հայ հասարակության մեծ մասն է համարում, այլ «վաղվա իրականություն»՝ այնպիսի նվազագույնի հասցվեն կաշառակերությունն ու կոռուպցիան, որ ժողովուրդը սկսի հավատալ պետական չինովնիկներին. «Օրենքի առաջ բոլորի հավասարությունը եւ պատժի անխուսափելիությունը պետք է ապահովեն պետական կառույցները: Մենք դա պետք է անենք: Այո՛, դժվար է լինելու, բայց ոչ մի լավ բան այս աշխարհում հեշտ չի լինում»: Այո՝ եթե մեխը մեխով չհանեն, եւ սղոցի դեմ այլ սղոց չօգտագործեն: Հենց թեկուզ վերջին՝ Գագիկ Բեգլարյանի հրաժարեցման դեպքը հիշենք. դեպքի մանրամասները մամուլ են հասել միջնորդավորված, եւ անգամ ուղիղ այդ պաշտոնյաները տեղի ունեցածը չեն մեկնաբանել անձամբ: Ու անկախ Բեգլարյանի կերպարի՝ հասարակությանն անընդունելի լինելու պարագայի , ընտրության ինստիտուտ ներկայացնող պաշտոնյայի հեռացումն ի վերջո վարչական եղանակով է կատարվել, հենց դա խոսում է այն մասին, որ օրենքի առաջ էլի բոլորը հավասար չէին: Որովհետեւ ընտրովի ինստիտուտի ղեկավարին եւ նշանակովի նախարարին հավասար սկզբունքով պաշտոնանկելը հենց հետքայլ է ժողովրդավարական մոտեցումից: Բա հարցնեիք երեւանցուն, բայց թե ինչպե՞ս, երբ ժամանակին մայրաքաղաքի ղեկավար ընտրելու ոչ այնքան ժողովրդավար սկզբունք է որդեգրվել: Իսկ մամուլում (եւ իբր ընդդիմադիր հորջորջվող) կուտ գցելու եղանակով հարցի լուծման ուտվող տարբերակ հորինելը եւս ձեւ է, բայց ոչ Նախագահի ելույթում առաջադրած նպատակներին եւ սկզբունքներին համարժեք, առաջիկայում այդպիսի ձեւերից լավ կլիներ ձեռնպահ մնալ:

Ընդհանրապես, կարծում ենք, միջոցառումները կադրային փոփոխություններ, ակտիվ ելույթներ՝ տարբեր բաց տեքստերով եւ տարբեր ենթատեքստերով, խոսում են այն բանի մասին, որ Նախագահ Սարգսյանը փակում է իր կառավարման ժամանակի մի էջը եւ նորն է բացում. եթե մինչեւ այժմ ձեռքերը մի փոքր կապված էին (հետընտրական զարգացումներից սկսած, հայ-թուրքականով եւ ղարաբաղյան խնդիրներով շարունակվող), ապա այսուհետ իրեն ազատ է համարում տարբեր կապանքներից եւ ակտիվորեն խաղալու է քաղաքական, տնտեսական եւ չինովնիկական դաշտում: Այլ ելք գործող Նախագահը չունի, անգամ ուշացել է, քանի որ Նախագահ դառնալուց հետո նրանից շատ բան էր սպասում հասարակությունը՝ ներքին փոփոխությունների իմաստով, սակայն նա տարբեր պատճառներով բաց թողեց ժամանակը եւ հիմա փորձում է հետ բերել բաց թողածը: Որպես արդեն ճանապարհ անցած Նախագահ՝ նա հիմա անսահմանափակ հնարավորություն ունի, ինչը չունի ընդդիմությունը, եւ չունի կոալիցիոն մյուս մեծ միավորում ԲՀԿ-ն, քանի որ իշխանության մաս լինելով՝ վերջինս այնքան մեծ չէ, որ թելադրի: ԲՀԿ-ն պետք է ի վերջո ընտրի՝ ընդդիմություն դառնա՞ ու զրկվի՞ լծակներից՝ մեկուկես տարի հետո ժողովրդի ավելի տկար քվե հուսալով, թե՞ մնա ու փորձի կերպար պահել: Ընդդիմության կողմ քայլ գցելը կնշանակեր հարվածի տակ դնել Ծառուկյանի եւ նրա կուսակիցների բիզնեսները, ինչը բոլորովին չէին ողջունի նրա ազդեցիկ կուսակիցներից շատերը: Վերջին շրջանում ԲՀԿ-ի մասին տարածվող լուրերի ֆոնին՝ այնպես որ անսպասելի չէր Նախագահ Սարգսյանի անդրադարձը: Անսպասելի չէր, բայց համարյա ոչինչ չորոշակիացրեց. առողջ մրցակցություն եւ ոչ թե՝ խարդավանքներ, ձեւակերպեց նա: Վերջնագիր չի ներկայացրել ԲՀԿ-ին՝ դա շեշտեց, բայց չժխտեց փաստորեն, որ այդ «վերջնագրերը» իր պահանջներն են թ՛ե իր կուսակիցներին, եւ թ՛ե կոալիցիոն գործընկերներին, որն օրինաչափ համարեց: Ծառուկյանն էլ հենց նույն օրը հայտարարեց, թե մտադիր չեն դուրս գալ կոալիցիայից, հետ կանչել նախարարներին, եւ որ՝ Քուշկյանն էլ լավ նախարար է: Բայց մի՞թե ստացվեց այն հարցի պատասխանը՝ Ծառուկյանը սպասելո՞ւ է Սերժ Սարգսյանին՝ խորհրդարանական կամ Նախագահական ընտրություններում ու սեփական թեկնածուով չի գնալու: Տրամաբանություն կա նրա մեջ, որ ՀՀԿ-ն ու նրա առաջնորդը հիմա ուզենան դա լսել՝ թե չէ վարչական ռեսուրսները ձեռքին մի տարի հզորանալուց հետո բա որ ԲՀԿ-ն ա՞յլ բան ասի: Ու տրամաբանություն կա նրա մեջ, որ ԲՀԿ-ն հիմա դա չուզի բացահայտել՝ ինչու զրկվի զանազան ռեսուրսներից ու լծակներից: Մի խոսքով գլխավոր ինտրիգն այս հարցի շուրջ պահպանվում է: Քաղաքակիրթ հանրային երկխոսություն, այո, ասաց, որ պետք է շարունակենք արմատավորել մեզանում, բայց նաեւ անհասկանալի մնաց՝ արդյո՞ք դա քաղաքական հակառակորդներին եւս վերաբերում է: Հանրության համար անհասկանալի մնաց այն երրորդ խումբը, որ որպես ընդդիմություն գծեց Նախագահը . առաջինը հասկանալի է, բոլոր այն ուժերը, որոնք համակիր են, բայց կոալիցիա չեն, որտեղ նաեւ ՀՅԴ-ն է. հավերժ իշխանափոխություն ցանկացողը ՀԱԿ-ն է, իսկ ո՞վ է երրորդ խումբը: Չէ՞ր կարող դա վերաբերել խորհրդարանական ընդդիմության երկրորդ հատվածին, եթե դա վերաբերում է դրամաշնորհներով սնվող որոշ ուժերի՝ ասելով, թե « այս երրորդ ուժերին մենք ընդդիմախոս չենք համարում, մենք նրանց այլ անուն ենք տալիս»: Ի՞նչ անուն, ո՞ւմ: Չնայած հետո ասում էր, թե մենք ցուցաբերելու ենք հնարավոր առավելագույն հանդուրժողականություն: Ի տարբերություն, որ կոռուպցիայի, կաշառակերության եւ բյուջետային միջոցների մսխման հարցերում պետք է լինի զրո հանդուրժողականություն. «Գողությունը, կաշառակերությունը հասարակապես պետք է պատժվեն, եւ կուսակցական պատկանելությունը կամ ցանկացած այլ տիպի կապեր որեւէ նշանակություն չպետք է ունենան»: Հիմա մնում է ՝ սա իրականություն դառնա: Որովհետեւ այսպիսի լոզունգներ մեր հասարակությունը շատ է լսել, հատկապես՝ նախընտրական ժամանակներում, եւ սովորել է, որ դրանք չեն կատարվում... բայց մի փոքրիկ թաքուն հույս էլի պահպանում է, որ գուցե, մի օր...

Գալով անբարեխիղճ պաշտոնյաներին՝ Նախագահն ասում է, որ մեզ պետք չեն. «Կուսակցությունը չի կարող որեւէ հանրապետականի համար հովանի լինել: Կուսակցությունը որեւէ մեկիս անձնական ինչ-ինչ խնդիրների լուծման համար չէ. ճիշտ հակառակը, այդ մե՛նք ենք կուսակցության ծրագրերի իրականացման համար», կուսակցական ախորժակապետերին հասկացնում էր նա. «Ես նկատի ունեմ այն հանգամանքը, որ միշտ չէ, որ մենք պատասխանատու քաղաքական պաշտոնների ենք նշանակում հանրապետականների: Կարծում եմ, որ միայն ու միայն ուժեղ կուսակցությունը կարող է այդպես վարվել՝ դրանով իսկ հնարավորություն տալով այն բազմահազար համակիրներին, ովքեր ինչ-ինչ պատճառներով կուսակցությունում չեն, բայց մշտապես եղել են մեզ հետ, իրականացրել են մեր ծրագրերն ու քաղաքականությունը: Մենք այս կուրսը շարունակելու ենք: Ցանկացած դեպքում, եթե տեսնենք, որ տվյալ գործը կարող է ավելի լավ կատարել մեկ այլ անկուսակցական, մենք այդպես ենք վարվելու»: Եթե նկատի ունենանք, որ մոտակա պաշտոնանկությունների առումով մեկ տասնյակի չափ պաշտոնյաների անուններ են շոշափվում, չի բացառվում, ուրեմն, որ վարչարարների նոր անուններ հայտնի լինեն շուտով, եւ քաղաքական դեմքերի փոխարեն, ինչպես արեւմուտքում, կառավարություն հոսեն նոր արհեստավարժներ: Բոլոր դեպքերում՝ քաղաքական դեմք, թե արհեստավարժ՝ մեր ժողովուրդը հոգնել է ձեւական պաշտոնափոխություններից: Համբերության որեւէ ռեսուրս այժմ արդեն չի մնացել մեր հասարակության մոտ, նրանք իրական փոփոխությունների շունչն են ուզում զգալ, արդյունք են ուզում տեսնել՝ թե տնտեսական, թե մարդկային, թե իրավական հարթություններում:

## ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱՆԴԻՊՈՒՄ, ՀԱՄԵՐԳ

# Վարչապետ Տիգրան Սարգսյանն ընտրվեց Մանկավարժական համալսարանի խորհրդի նախագահ

Երեկ Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) հիմնական մասնաշենքում տեղի ունեցավ Մանկավարժական համալսարանի խորհրդի նիստը, եւ խորհրդի նախագահ ընտրվեց ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը: Արդյունքները, սակայն, ամփոփվեցին կուլտուրայի ֆակուլտետի մասնաշենքում: Կուլտուրայի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար **Գեւորգ Թադեւոսյանը** տեղեկացրեց, որ խորհրդի նախագահը նիստից հետո լինելու է իրենց մասնաշենքում, որտեղ ուսանողներն ու դասախոսները մեծ ոգեւորությամբ սպասում էին նրան:



Նիստից հետո վարչապետ Տիգրան Սարգսյանը կուլտուրայի ֆակուլտետում էր: Վարչապետը շրջեց վերջերս հիմնանորոգված մասնաշենքում, ծանոթացավ շենքային պայմաններին ու ուսումնական գործընթացին, եղավ պարարվեստի դահլիճում, որտեղ այդ ժամանակ ինքնուրույն աշխատանքի դասաժամ էր: Վարչապետի հետ կուլտուրայի ֆակուլտետ էին եկել նաեւ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը եւ ՀՊՄՀ-ի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը: Այնուհետեւ դահլիճում խորհրդի անդամների, ռեկտորատի կազմի, ֆակուլտետների ներկայացուցիչների՝ դեկանների, ամբիոնի վարիչների եւ ուսանողների ներկայությամբ ամփոփվեցին քվեարկության արդյունքները:

ՀՀ վարչապետին եւ ներկաներին իրենց կատարումներով ողջունեցին կուլտուրայի ֆակուլտետի երգչախումբն ու փողային նվագախումբը, ապա Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ **Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը** օրհնության խոսք ասաց: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ, պրոֆեսոր **Հրավարդ Հակոբյանը** հրապարակեց, որ միաձայն ՀՊՄՀ-ի խորհրդի նախագահ է ընտրվել Տիգրան Սարգսյանը: Հրավարդ Հակոբյանը վարչապետին հանձնեց ՀՊՄՀ-ի խորհրդի նախագահի շքանշանը:

**Տ. Սարգսյանը** խորհրդի անդամներին հայտնեց իր շնորհակալությունը եւ նշեց, որ Մանկավաժական համալսարանի խորհրդի նախագահ լինելը մեծ պատասխանատվություն է. «Կարծում եմ՝ առաջին հերթին մեր առջեւ խնդիր է դրված բարձրացնելու Մանկավարժական համալսարանի հեղինակությունը, եւ այս խնդիրը մենք կարող ենք լուծել զուգահեռաբար աշխատելով մի քանի ուղղություններով: Առաջինը, եթե խորհուրդն ու դասախոսական կազմն իր առջեւ դնի բարձր ու վեհ գաղափարներ, եւ ազնվորեն նվիրվի այդ նպատակների իրականացմանը: Ուզում եմ, որ մեր հանրապետությունում փոխվի վերաբերմունքը մանկավարժական համալսարանի հանդեպ, եւ այս համալսարանը հանրապետությունում լինի առաջինը»: Կարեւորելով մանկավարժների ու կրթված հասարակության դերը՝ վարչապետը նշեց. «Հայաստանում գիտելիքահենք հասարակություն ստեղծելը մեր բարեփոխումների նպատակն է»: **Ի. Պ.**



## ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

# Մոնթե Մելքոնյանի «Ինքնաքննադատություն» հատորը

Լոնդոնի «Կոմիտաս» ինստիտուտը Սեդա Մելքոնյանի թարգմանությամբ եւ Գրեգորի Թոփալյանի խմբագրությամբ լույս է ընծայել Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի եւ հետագայում ղարաբաղյան պատերազմի ազատամարտիկներից Մոնթե Մելքոնյանի «Ինքնաքննադատություն» հատորը, տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի նոյեմբերի 27-ի համարը:

Գրքում, ըստ լրատվության, Մելքոնյանը անդրադառնում է 1970-80-ական թվերին, լիբանանյան քաղաքացիական պատերազմի ժամանակ հայկական պաշտպանողական դիրքորոշումներին: Նրա մեկնաբանությունները անկեղծ ու ճիշտ են եւ ուսանելի: Գիրքը ունենալու է շարունակություն «Մելքոնյանի իրականությունը» վերնագրով: Հավելյալ տեղեկությունների համար խորհուրդ է տրվում այցելել info@gomidas.org կամ www.gomidas.org կայքերը: **Հ. Ծ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

## Անդրադարձ

# Լեզվի օրենքի քննարկումն սկսվեց, իսկ կենսաթոշակային համակարգի բարեփոխման փաթեթի քննարկումն ավարտվեց

Երեկ իր աշխատանքը շարունակեց Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանը եւ օրվա վերջում ձեռնամուխ լինելով «Հանրակրթության մասին» օրենքի առաջին հոդվածի առաջին ընթերցմամբ փոփոխությանը, որով հնարավոր է դառնալու այլընտրանքային, փորձարարական, միջազգային, հեղինակային կրթական ծրագրերի իրականացումը Հայաստանում, այլ խոսքով՝ օտարալեզու դպրոցների գոյությունը: Ապա եւ սկսվեց բուն՝ «Լեզվի մասին» օրենքի փոփոխությունների երկրորդ ընթերցումը, որը զեկուցող ԿԳ նախարար **Արմեն Աշոտյանը** ներկայացրեց նախագծին ընդդիմախոս պատգամավորների՝ տեղերից նետվող ռեպլիկների ուղեկցությամբ: Այսօր քննարկումը կշարունակվի:

Երեկ մի շատ կարեւոր փաթեթ էլ էր քննարկվում՝ կենսաթոշակային օրենսդրական բարեփոխված փաթեթը՝ երկրորդ ընթերցմամբ: Ըստ նախորդը օրը փաթեթը ներկայացրած աշխատանքի եւ սոցիալական հարցերի փոխնախարար **Արտեմ Ասատրյանի**՝ փաթեթի վերաբերյալ ստացվել է 350 առաջարկություն, տարբեր ձեւաչափերով քննարկումների ընթացքում՝ այդ թվում եւ ԱԺ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովում, ձեւակերպվել են նոր դրույթներ, տրվել նոր լուծումներ: **Արտեմ Ասատրյանը** ներկայացրեց, որ խմբագրական ու տեխնիկական ուղղումներից բացի, փաթեթի նախագծերում կատարվել են մի շարք հստակեցումներ: Մասնավորապես կրթության ու մշակույթի ոլորտում նախատեսվել է մասնակի կենսաթոշակի հնարավորություն՝ առանց պարտադիր հաշվառման պահանջի, հստակեցվել է ստաժի հաշվարկման կարգը, տարանջատվել են պարտադիր եւ կամավոր կուտակային կենսաթոշակների վրա տարածվող դրույթները, ամրագրվել է կենսաթոշակային հիմնադրամներում մասնակիցների շրջանակը: «Եկամտահարկի մասին» օրենքում կատարվել են փոփոխություններ, որոնց արդյունքում կամավոր կերպով կուտակային կենսաթոշակ վճարելու դեպքում նախատեսվել են եկամտահարկի գծով արտոնություններ ՝ կամավոր համակարգը խթանելու նպատակով: Չնայած փաթեթը գովերգող ԱԺ գլխադասային հանձնաժողովի նախագահ **Հակոբ Հակոբյանի**, որն ասում է, թե կամավոր կուտակային համակարգը հնարավորություն կտա փորձարկել մեթոդը՝ մինչեւ 2014-ին պարտադիր կուտակային համակարգի ներդրումը, փաթեթի ընդդիմախոսները շատ հակափաստարկներ ունեն. «Արդյո՞ք 2010 թ. կառավարությունն իրավունք ունի կանխորոշելու 2014 թ. կառավարության գործունեությունը, կենսաթոշակի համակարգը: Հեռետորական հարց՝ իսկ դուք լինելո՞ւ եք իշխանության, որ այսօր նման հարց եք բարձրացնում: Իմ գնահատականով՝ չի կարելի հիմիկվանից կանխորոշել 2014 թ. քաղաքականությունը: Ես սա գնահատում եմ ոչ կոռեկտ», սա **Վիկտոր Դալլաքյանի** գնահատականն էր, ով համակարգի ներդրումն անվանեց կառավարության էքսպերիմենտ 530 հազար թոշակառուի վրա: ՀՅԴ-ական **Արա Նռանյանը** համարեց, որ այս փաթեթը Հայաստանում հետամնաց պետության մոդելն է ամրագրում, բացի այդ՝ կուտակված կենսագումարը այն թվերին, երբ դա պետք է ստանան, նշանակալիորեն հետ կմնա այդ ժամանակի կենսամակարդակից: «Ժառանգության» **Ստյոպա Սաֆարյանը** պատկերավորեց. «Եղունգ էլ չունես՝ կառավարության առաջարկով պետք է գլուխդ քորես»: **Վահան Հովհաննիսյանին** զարմացնում էր, թե ինչո՞ւ են ուզում, որ մարդիկ իրենց փողը անտոկոս դնեն բանկերում, տոկոսները ուրիշները ուտեն, երբ կարող են տոկոսով դնել: **Արծվիկ Մինասյանը** նախագծերն անվանեց ծածկադմբոցով անցկացվող մի փաթեթ, որը ոչ թե կենսաթոշակային համակարգն է բարեփոխում, այլ տնտեսական շուկան աշխուժացնելու նպատակ ունի. «Այս գումարները ուղղվելու են եւրոպական շուկաներ, Հայաստանի տնտեսության համար որեւէ օգտակար ներդրում չեն ապահովելու: Կառավարությունը փոխում է բարեփոխումների ընթացքը վատ ուղղությամբ»: Ահա այս գնահատականներով եւ արտահերթ քննարկվում էր հեռահար մի փաթեթ, որը վերաբերելու է բոլորիս ճակատագրին: Ս. Խ.

# «Կարող էինք ավելին անել», դժգոհում է կրթության եւ գիտության նախարարը

Կրթության եւ գիտության նախարար **Արմեն Աշոտյանը** երեկ ԿԳՆ-ում ամփոփեց 2010-ի ընթացքում կատարված աշխատանքները: Բացի նախարարության իրականացրած աշխատանքներից՝ լրագրողներին հետաքրքրում էր՝ Արմեն Աշոտյանը կմնա՞ իր պաշտոնում, թե՞ պաշտոնանկ կարվի: Հարցին նախարարն այսպես պատասխանեց. «Շաբաթ օրը՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության հիմնադրման 20-ամյակին նվիրված նիստի ժամանակ երկրի ու կուսակցության նախագահն ուրվագծեց, հաստատեց պետական պաշտոնյայի գործունեության նոր որակական չափանիշները: Վստահ եմ՝ բոլոր այն պաշտոնյաները, որոնք չեն համապատասխանելու երկրի ղեկավարի պահանջներին, պետք է չաշխատեն: Եթե այդ պաշտոնյան կլինեմ ես, ես նույնպես չպետք է աշխատեմ»:

Անդրադառնալով տարվա ձեռքբերումներին՝ նախարարը նշեց, որ Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շնորհիվ նախարարությունը կարողացել է բացել նախակրթարաններ Արարատի ու Արագածոտնի մարզերի 41 համայնքներում: Արմեն Աշոտյանը խոսելով հանրակրթության որակից՝ նշեց. «Աշակերտական միջազգային 7 օլիմպիադաներից բերել ենք 7 մեդալներ, ինչը վկայում է հանրակրթության ոլորտի բավականին բարձր որակի մասին»: Նախարարի փոխանցմամբ՝ շարունակվել են բարեփոխումները ներառական կրթության ասպարեզում: Կրթության ու գիտության ոլորտում համագործակցելու պայմանագրեր են կնքվել տարբեր պետությունների հետ: Այդ պետություններից են Չեխիան, Սլովենիան, Վրաստանը, Իրանը, Թուրքմենստանը եւ այլն: Միջպետական պայմանագրերի համաձայն՝ այս տարի 220 ուսանողներ հնարավորություն են ստացել շարունակելու իրենց կրթությունը արտերկրում: Նախարարությունն իր հերթին ընդունելություն է կազմակերպել օտարերկրացիների համար, ընդունվել են 420 արտասահմանցի դիմորդներ: Սփյուռքի համար տպագրվել է 50 հազար դասագիրք, որոնք ամբողջությամբ առաքվել են: «Այս տարի մեզ հաջողվեց լուծել Ջավախքի հայկական դպրոցներին դասագրքերով ապահովելու խնդիրը», տեղեկացրեց նախարարը: Լիցենզավորման գործընթացի վերաբերյալ Ա. Աշոտյանը նշեց, որ այս տարի մասնակի կամ ամբողջությամբ կասեցվել են 25 ուսումնական հաստատությունների լիցենզիաները: Բարեփոխումներ են կատարվել նաեւ Բարձրագույն որակավորման հանձնաժողովում, խստացվել են դոկտորական ու թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության մեխանիզմները: 2010 թվականին Հայաստանում դոկտորական կոչում են ստացել 43, իսկ թեկնածուի կոչում՝ 485 հոգի:

Ինչ վերաբերում է խնդիրներին, նորություն չէ, որ կրթության ոլորտում ամենամեծ խնդիրը կոռուպցիան է, ինչի վերաբերյալ նախարարն իր դժգոհությունը հայտնեց. «Դժգոհ եմ կոռուպցիոն երեւույթների դեմ պայքարի մեր արդյունավետությունից, տեղերում շարունակաբար դրսեւորվող կամայականություններից, ապօրինություններից եւ օրենքների խախտումներից: Բոլորս՝ սկսած ինձնից, ուզում ենք, որ ամեն ինչ շտկվի եւ ուղղվի հենց հիմա եւ միանգամից, բայց, ցավոք, դա անհնարին էր»: Չնայած թվարկած հաջողություններին՝ Արմեն Աշոտյանը դժգոհ է իրենց կատարած աշխատանքների ծավալից. «Կարող էինք ավելին անել»:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Վիշապի այգում բազմահարկ կառույցի թույլտվություն գոյություն չունի

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից նշանակված Վիշապի այգու կառուցապատման վերաբերյալ հասարակական լսումները կարելի է համարել չկայացած: Դեկտեմբերի 18-ին՝ 10:30-ին, քննարկման համար Վիշապի այգի էին եկել շրջակա տների բնակիչներ, Բնապահպանության նախարարության, հասարակական կազմակերպությունների եւ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ: Սակայն քննարկմանը չհայտնվեցին ոչ «ԿԱԷՌ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն, որ սկսել էր այգու կառուցապատումը, ոչ Նոր Նորքի թաղապետարանը:

Հիշեցնենք, որ ՀՀ բնապահպանության նախարար Արամ Հարությունյանը բնակիչների եւ հասարակայնության պահանջով Վիշապի այգում կանգնեցրեց բազմահարկ կառույցի ապօրինի շինարարությունը եւ հայտարարեց. «Մենք կանցկացնենք հասարակական լսումներ այն մարդկանց հետ, ովքեր այստեղ ապրում են, կլսենք նրանց, իսկ դուք կպատմեք, թե ինչ եք ուզում կառուցել, ինչ փաստաթղթեր ունեք: Եթե ստանաք փորձաքննության դրական եզրակացություն, ապա կշարունակեք շինարարությունը»:

Վիշապի այգու համար հասարակայնության պայքարը մեկ ամսից ավելի է՝ շարունակվում է: 4 հազարից ավելի տարեկան քարե վիշապը շինարարություն իրականացնողները գերեվարել էին, իսկ ծառերը կտրել են ու այրել: Իսկապես, այգու բարեկարգման ակցիայի ժամանակ տնկված ծառերի միջեւ նկատելի էին ծառերի մնացորդներ եւ այրված արմատներ:

Ինչպես նշեց ճարտարապետ **Մարինա Փափազյանը**, փաստաթղթերը, որոնց հիման վրա ընկերությունը սկսել է շինարարությունը, վկայում են, որ թույլտվությունը տրված է այգու բարեկարգման, այլ ոչ թե բնակելի շենքի կառուցման համար: Սակայն այդ տարածքի սեփականատերը որոշել է բնակելի շենք կառուցել՝ չունենալով դրա համար օրինական հիմք: «Օրինական հիմք չի եղել նաեւ տարածքը օտարելու որոշման համար», կարծում են բնակիչները եւ հասարակական կազմակերպությունները:

Ավելի քան 200 հոգի, որոնք հավաքվել էին այգու այդ տարածքում, ստորագրեցին կառուցապատման դեմ: Ենթադրաբար անօրինական որոշումը հետ կանչելու դիմումով բնակիչներն ու ակտիվիստները մտադիր են դիմել Երեւանի նոր քաղաքապետ Կարեն Կարապետյանին, ինչպես նաեւ՝ ՀՀ կառավարությանը: Ս. Մ.

## ՀԵՌԱՎՈՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

# Orange-ը եւ «Շեն»-ը շարունակում են համայնքային զարգացմանն ուղղված բարեգործական ծրագրի իրականացումը Տավուշի մարզում

Orange-ը եւ «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպությունը շարունակում են Հայաստանի հեռավոր համայնքների զարգացմանն ուղղված բարեգործական ծրագրի իրականացումը, որոնց առանցքում շարունակում են մնալ երեխաները՝ կրթություն, առողջություն, նախադպրոցական եւ մարզական դաստիարակություն:

Բարեգործական ծրագրերի շրջանակներում վերաբացվեցին Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի թիվ 2 դպրոցի եւ Ջուջեւան գյուղի միջնակարգ դպրոցի մարզադահլիճները: Ջուջեւան գյուղի մարզադահլիճը վերանորոգվել է USAID-ի միջոցներով, CHF եւ «Շեն» կազմակերպությունների համատեղ ջանքերով, իսկ Նոյեմբերյանի մարզադահլիճի վերանորոգումն իրականացվել է համայնքի ջանքերով: Մարզադահլիճները վերազինվել են մարզական գույքով Orange-ի միջոցներով՝ ընկերության ռազմավարական գործընկեր «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության ռազմավարական գործընկերության շրջանակներում:



Երկու դպրոցների մարզադահլիճները, որոնք կահավորվել են տարբեր մարզաձեւերի համար անհրաժեշտ պարագաներով եւ մարզասարքերով, այժմ կկարողանան լիովին բավարարել դպրոցական սպորտային ծրագրի պահանջները: Ամանորը դպրոցի աշակերտները կդիմավորեն արդեն միանգամայն նոր մարզական միջավայրում, իսկ հաջորդ կիսամյակից սկսած՝ մարզական գույքի առկայությունը թույլ կտա ոչ միայն լիարժեք կերպով կազմակերպել ուսումնական ծրագիրը, այլ նաեւ ստեղծել տարբեր սպորտային խմբակներ եւ միջոցառումներ:

«Որպես երկրի տնտեսական կյանքում կարեւոր դեր ունեցող ընկերություն՝ մենք ցանկանում ենք նաեւ մեր ներդրումն ունենալ այլ՝ «ոչ հաղորդակցային» ոլորտներում, եւ որպես մեր բարեգործական ծրագրերի առանցք սահմանել ենք այն ամենը, ինչ վերաբերում է երեխաներին, ինչպես նաեւ խոցելի գյուղական համայնքներին: Մեզ համար խիստ կարեւոր է այն փաստը, որ այս ծրագրի իրականացման գործում մասնակցություն են ունեցել ինչպես «Շեն» կազմակերպությունը, այնպես էլ համայնքները: Համայնքների ներգրավվածությունը մեզ համար երաշխիք է ծրագրի կենսունակության համար», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն **Բրունո Դյութուան**:

Երկու ծրագրերի իրականացման համար Orange-ն ընդհանուր առմամբ տրամադրել է 5,607,000 դրամ:

Տավուշի մարզի մեկ այլ գյուղում՝ Սեւքարում, մոտ մեկ ամիս առաջ բացվել է գյուղի մանկապարտեզը՝ առաջին իսկ օրվանից դիմավորելով 62 սաների: Մանկապարտեզի վերականգնման եւ կահավորման աշխատանքները համատեղ իրականացրել են USAID, CHF, World Vision, UNDP, Orange եւ «Շեն» կազմակերպությունները, ինչպես նաեւ մասնավոր բարերարներ: Աշխատանքներին իր ակտիվ մասնակցությունն է բերել նաեւ համայնքը: Orange-ն իր ներդրումն է ունեցել հատկապես մանկապարտեզի կահավորման գործում, որի համար տրամադրել է 4,660,000 դրամ:

«Մեր համագործակցությունն Orange-ի հետ սկսվեց մեկ տարի առաջ, եւ այս ընթացքում մենք միասին կյանքի կոչեցինք տասից ավելի նախագծեր: Մեր մոտեցումները համընկնում են. Հայաստանը ոչ միայն Երեւանն է, այլ նաեւ իր մարզերն ու գյուղերը, այս պատճառով է, որ ուրախ ենք այս համագործակցության համար, որն արդեն ապացուցել է իր արդյունավետությունը եւ երկարաժամկետ իրագործումների է ուղղված», ասաց «Շեն»-ի վարչության նախագահ **Հայկ Մինասյանը**:

# Հաղարծին գյուղի մերձակայքում անտառ չի այրվում

Դիլիջանում, Հաղարծին գյուղի մոտակայքում հսկայական մակերեսով անտառ է վառվում: Այսպիսի ահազանգ էր ստացել «**Ազգի**» խմբագրությունը, օգնության կոչով եւ համապատասխան գերատեսչություններին դիմելու խնդրանքով:

Արտակարգ իրավիճակների նախարարության տեղեկատվական բաժնի պետ **Նիկոլայ Գրիգորյանը** «**Ազգի**» հարցին ի պատասխան նշեց, որ դեկտեմբերի 19-ի տվյալներով, Հաղարծին գյուղի մոտակայքում հրդեհաշիջման աշխատանքները վերսկսվել են: Այդ աշխատանքներին մասնակցել են հրշեջներ, նաեւ «Հայանտառ» ընկերության 10 աշխատակից, ինչպես նաեւ Հաղարծին գյուղի բնակիչներ: Նույն օրվա տվյալներով՝ այրվել է մոտ 10 հա խոտածածկ տարածք:

Ըստ Նիկոլայ Գրիգորյանի, հրդեհը դեռեւս չի մարվել ամբողջությամբ, աշխատանքները շարունակվում են, իրավիճակը՝ վերահսկվում: ԱԻՆ տեղեկատվական բաժնի ղեկավարը «**Ազգին**» հավաստիացրեց, որ անտառ չի այրվում, այլ՝ միայն խոտածածկ տարածքներ:

Ա. Հ.

# Մոհամեդ Ռեֆաաթ էլ Իմամ. Հայկական հարցը շահերի խնդիր է

## *Ադանայի ջարդերով Օսմանյան կայսրությունը փորձում էր հասկանալ միջազգային հանրության արձագանքը*

***Ալեքսանդրիայի (Եգիպտոս) համալսարանի Դամանհուրի մասնաճյուղի գրականության ֆակուլտետի պրոֆեսոր Մոհամեդ Ռեֆաաթ էլ Իմամը արդի եւ ժամանակակից պատմության մասնագետ է, որ նաեւ հայ-արաբական մշակութային մերձեցմանը նպաստող արաբալեզու «Արեգ» պարբերականի գլխավոր խմբագիրն է: Մի շարք հրապարակումների հեղինակ է, որոնք վերաբերում են Հայկական հարցին, Հայ դատին եւ հայերին Եգիպտոսում: Մոհամեդ Ռեֆաաթը մասնակցում էր նախորդ շաբաթ Երեւանում անցկացված «Ցեղասպանության հանցագործությունը. կանխարգելում, դատապարտում եւ հետեւանքների վերացում» միջազգային գիտաժողովին` ներկայացնելով «1909 թ. Ադանայում տեղի ունեցած հայերի կոտորածների եւ դրա ազդեցությունը Եգիպտոսում» թեմայով զեկույց: Ներկայացնում ենք Մոհամեդ Ռեֆաաթի հարցազրույցը «Ազգին»:***

**- Պրն Ռեֆաաթ, որպես Հայկական հարցի եւ հայության խնդիրների նկատմամբ հետաքրքրություն ունեցող պատմաբան, ինչպիսի՞ն է Ձեր դիրքորոշումը հայության եւ հայկական հարցի առնչությամբ:**

- Հայկական հարցը ամենադժվարին հարցերից մեկն է Արեւելքում առկա խնդիրներից, հատկապես որ հայկական հարցը միջազգայնացվել է դեռեւս 1878 թ Բեռլինի վեհաժողովի ժամանակ: Հայկական հարցի միջազգայնացման պատճառ դարձավ հենց Օսմանյան կայսրությունում իրականացվող հալածանքը հայերի նկատմամբ: Տարածաշրջանային եւ ընդհանրապես աշխարհի բոլոր երկրներն օգտվեցին Հայկական հարցից` իրենց շահերի իրագործման համար: Առաջատար պետությունները եւս այս հարցին նայեցին Օսմանյան կայսրության հետ իրենց սեփական շահերի տեսանկյունից: Ուզում եմ ընդգծել, որ Հայկական հարցը կրոնական հիմք չուներ, այլ մշտապես եղել եւ մնում է շահերի խնդիր:

**- Ի՞նչ բնութագրական կարելի է տալ հայ-եգիպտական հարաբերություններին:**

- Եգիպտոսը ամուր հարաբերություններ ունի Հայաստանի հետ: Խորհրդային Միության փլուզումից հետո Եգիպտոսը երկրորդ արաբական երկիրն էր, Լիբանանից հետո, որ դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Հայաստանի Հանրապետության հետ: Հայաստանը արաբական աշխարհում իր առաջին դեսպանատունը Եգիպտոսում ունեցավ, եւ առաջին դեսպանը պարոն Էդվարդ Նալբանդյանն էր, որը կարեւոր դերակատարություն ունեցավ հայ-եգիպտական հարաբերությունների զարգացման գործում` հիմք դնելով Եգիպտոսի եւ Հայաստանի ամուր հարաբերությանը:

**- Ինչպե՞ս կարելի է բնութագրել արաբական աշխարհի դիրքորոշումը Հայաստանի եւ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի նկատմամբ:**

- Պատմության ընթացքում եւ ներկա ժամանակում հայ-արաբական հարաբերությունները, ընդհանուր առմամբ, լավ եւ անգամ գերազանց են համարվում: Արաբները կարեւոր դեր խաղացին Հայկական հարցի զարգացման ընթացքում` ընդունելով ջարդերից փրկված հայերին: Սիրիան, Լիբանանը, Հորդանանը, Պաղեստինը, Եգիպտոսն ու Իրաքը ողջունեցին փախստական հայերի ներկայությունը իրենց սեփական հողի վրա: Արաբներն այս կերպ ապահով ապաստան տվին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած կոտորածներից փրկված, տեղահանված հայերին:

Հարկ է նշել, որ Եգիպտոսի կառավարության դիրքորոշումը հայերի հանդեպ հստակ է առաջնորդ Սաադ Զաղլուլի ժամանակից, երբ հրամայվեց Երուսաղեմից եւ Հունաստանից Եգիպտոս բերել հայ որբ մանուկներին` հնարավորություն ստեղծելով նրանց համար մեծանալու եւ ապրելու եգիպտահայ օջախներում: Եգիպտոսի` հայերի հանդեպ դիրքորոշման մասին է վկայում նաեւ ժամանակին ձեւավորված հայ համայնքը, որը մեծ նշանակություն ունեցավ հայ-արաբական հարաբերությունների զարգացման գործում:

**- Իսկ ինչպիսի՞ն է արաբական աշխարհի մոտեցումը հենց Հայոց ցեղասպանության ճանաչման առումով:**

- Լիբանանը պաշտոնապես ճանաչել է Հայոց ցեղասպանությունը, սակայն արաբական մյուս երկրները` Սիրիան, Հորդանանը, Իրաքը, Եգիպտոսը, իրենց օրակարգում չունեն Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը, այն ուղղակի ներկա իրավիճակում չի էլ քննարկվում: Եվրոպական եւ ամերիկյան բոլոր այն երկրներում, որոնք ճանաչել են Հայոց ցեղասպանությունը, այդ երկրների կառավարությունների որոշման հետեւում կանգնած է եղել հայկական լոբբինգը: Բացի Լիբանանից, մյուս արաբական պետություններում հայկական լոբբինգը շատ թույլ է, ուստի Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը որեւէ կերպ չի մտնում օրակարգ: Ինչ վերաբերում է Եգիպտոսին, ապա հայերի եւ Հայաստանի հանդեպ վերաբերմունքը կարելի է գնահատել նաեւ նրանով, որ Կահիրեի համալսարանի բանասիրական ֆակուլտետում գործում է հայագիտության ամբիոն: Եգիպտոսում լույս է տեսնում նաեւ «Արեգ» պարբերականը արաբերենով, որն անդրադառնում է հայկական հարցին եւ հայերի կյանքին առանց Եգիպտոսի կառավարության որեւէ միջամտության: 1998 թվականից արաբերենով հրատարակվող «Արեւ» ամսագիրը այս տարվանից լույս է տեսնում «Արեգ» անունով:

Բացի այս ամենը, Ալեքսանդրիայի համալսարանի պատմության ֆակուլտետը միակն է արաբական աշխարհում, որտեղ դասավանդում են «Հայկական հարց» առարկան: Այդ առարկան ներկայացվում է երկու լեզուներով` արաբերեն եւ անգլերեն, եւ դասավանդում եմ ես: Իմ դասախոսական փորձից ասեմ նաեւ, որ կան մագիստրոս եւ ասպիրանտ ուսանողներ, որոնք որպես թեմա ընտրում են Հայկական հարցը, որի առնչությամբ երբեւէ որեւէ առարկություն չի եղել համալսարանի ղեկավարության կողմից կամ Եգիպտոսի կառավարության:



**- Գուցե ես սխալվում եմ, բայց քանի որ նշեցիք հայագիտության ամբիոնի մասին, կարո՞ղ եք հստակեցնել, թե ճի՞շտ են արդյոք տեղեկությունները, որ ամբիոնը ղեկավարում է ազգությամբ թուրք դասախոս:**

- Զեյնաբ Աբու Սինան թուրք գրականության գծով գիտությունների թեկնածու է, որ աշխատում է Կահիրեի համալսարանի բանասիրական ֆակուլտետում, ինչպես նաեւ հայագիտության ամբիոնի տնօրենն է` վարչական հարցերով, եւ ոչ մի միջամտություն չունի ամբիոնի դասախոսությունների եւ գիտաժողովների կամ գրքերի հրատարակման հարցերում: Նա Եգիպտոսի քաղաքացի է` թուրքական ծագմամբ: Ի դեպ, տեղեկացնեմ, որ հայագիտության ամբիոնի խորհուրդը որոշում է կայացրել հայոց պատմությունը դասավանդել արաբերենով` 2011-ի մարտից:

**- Պրն Ռեֆաաթ, ինչպիսի՞ դերակատարություն ունի ներկայումս արդեն տարիներ շարունակ տպագրվող «Արեգ» պարբերականը, ի՞նչ նպատակի է ծառայում: Ովքե՞ր եւ ի՞նչ նյութեր են հրապարակում պարբերականում:**

- «Արեգ» ամսագիրը միակ հանդեսն է արաբական աշխարհում, որը խոսում է Հայկական հարցի մասին բոլոր ժամանակների կտրվածքով` անցյալի, ներկայի եւ ապագայի: «Արեգ»-ը ներկայացնում է Հայաստանի եւ հայերի տեսակետը Հայկական հարցի շուրջը: Հրատարակում է պատմական փաստաթղթեր, որոնք թարգմանվում են արաբերենից, պարսկերենից, անգլերենից, ֆրանսերենից, գերմաներենից: Ըստ էության, այս պարբերականն է, որ հիմնական տեղեկություններ է տարածում հայերի մասին արաբական աշխարհում, եւ որ հասկանալի է` արաբերենով: «Արեւ» եւ ապա «Արեգ» պարբերականների լույս տեսնելուց հետո եգիպտական լրատվամիջոցներում եւ արաբական աշխարհում պատկերը փոխվել ու փոխվում է հայերի ու Հայկական հարցի նկատմամբ` առավել տեղեկացված ու լավ տրամադրված մթնոլորտ ստեղծելով: «Արեգ» ամսագրի գլխավոր խմբագիրը ես եմ, հայերեն նյութերի հարցերով խորհրդական է Պերճ Թերզյանը: Ամսագրի յուրաքանչյուր համարում հրապարակվում է 5-7 հոդված: Հոդվածների համար դիմում ենք կամ պատվիրում լրագրողներին, որոնք աշխատում են այլ լրատվամիջոցներում:

**- Դուք մասնակցեցիք «Ցեղասպանության հանցագործությունը. կանխարգելում, դատապարտում եւ հետեւանքների վերացում» միջազգային գիտաժողովին: Ինչպե՞ս կգնահատեք այդ հանդիպման արդյունքը:**

- Կոնֆերանսը շատ կարեւոր էր` հյուրընկալելու համար ցեղասպանության հարցով մեծագույն գիտնականների ու մասնագետների: Միջազգային իրավունքի տեսանկյունից բոլոր այն գաղափարները, որոնք հնչեցին գիտաժողովի ժամանակ, լավ էին եւ դրական, բայց անհրաժեշտ է մեխանիզմներ կամ ինստիտուտներ ստեղծել` գործնական արդյունքի հասնելու համար: Դիվանագիտությունը պետք է առավել նախաձեռնող դառնա, առավել շարժուն լինի` աշխատելով միջազգային հանրության հետ: Այդ պարագայում կարելի է ասել, որ գիտաժողովը հասավ նպատակին:

Ինչ վերաբերում է իմ ներկայացրած զեկույցին, որ առնչվում էր 1909 թ. Ադանայի կոտորածներին, ապա այդ իրադարձություններին անդրադառնալը նախ կարեւոր է այն իմաստով, որ իսլամը զերծ է մնում Հայոց ցեղասպանության հարցում պատասխանատվությունից: Մյուս կողմից, Ադանան «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության ռասիզմի դրսեւորումների սկիզբն էր: Ադանան «փորձադաշտ» էր` միջազգային հանրության արձագանքը իմանալու համար, մանրանկար էր, թե այդ ամենը ինչպես կարող էր տեղի ունենալ 1915 թվականին: Ուզում եմ առանձնակի հիշատակել, որ Ադանայի կոտորածների ժամանակ Եգիպտոսում մահմեդականների հոգեւոր կենտրոնը` «Ալ Ազհարը», հանդես էր եկել Ստամբուլում մահմեդականների հոգեւոր կենտրոնի կոչի դեմ, որը հորդորում էր իսլամի հետեւորդներին` կոտորել Ադանայում ապրող հայերին:

**- Առաջին անգա՞մ եք Հայաստանում: Ինչպիսի՞ տպավորություններ եք ստացել: Եվ քանի որ զբաղվում եք Հայկական հարցի դասախոսությամբ, պատրաստվո՞ւմ եք սովորել հայերեն:**

- Սա առաջին այցս է Հայաստան: Ընդհանուր տպավորությունս լավ է, հանգիստ երկիր է, հարմարավետ է այստեղ, մարդկանց դեմքերը հանգիստ են, Երեւանում զբոսնելիս չէի զգում, թե օտար երկրում եմ: Թեեւ հայերը փորձում են մտնել եվրոպական ընտանիք, սակայն իրենց կառուցվածքը, արտաքինը Արեւելքին է պատկանում, ինչը հանգստացնում է ինձ որպես Արեւելքի մարդու:

Հայերեն սովորելու առնչությամբ էլ ասեմ, որ Կահիրեի համալսարանի հայագիտության ամբիոնում ուսանողներին հայերեն են սովորեցնում: Ես էլ նրանց հետ արդեն յուրացրել եմ ամենատարրական գիտելիքները:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Սումգայիթ». նոր էջ ՀՀ դատախազության կայքէջում

Գործարկվել է ՀՀ գլխավոր դատախազության ինտերնետային էջի «Սումգայիթ» բաժինը (www.genproc.am/sumgait), որտեղ կարող եք ծանոթանալ 1980-ականների վերջերին Խորհրդային Ադրբեջանի տարածքում եւ 1990-ականների սկզբներին Լեռնային Ղարաբաղում հայերի նկատմամբ իրականացված ջարդերի կապակցությամբ հարուցված քրեական գործերի նյութերին:

Այս մասին տեղեկացնում են գլխավոր դատախազության մամուլի ծառայությունից: Մասնավորապես կայքում տեղադրվել են ականատեսների, տուժողների, նրանց հարազատների եւ իրավահաջորդների վկայությունները, իրեղեն ապացույց ճանաչված լուսանկարներ ու փաստաթղթեր, սպանվածների, առեւանգվածների եւ անհայտ կորածների ցուցակները: Ինտերնետային էջում հրապարակվել են նաեւ այն անձանց, նրանց թվում` Ադրբեջանի իրավապահ մարմինների աշխատակիցների ցուցակները, ովքեր մեղադրվում են հայկական գյուղերում հայերի բնաջնջման քաղաքականությանը մասնակցելու, հայերի նկատմամբ իրականացված վայրագությունները անմիջականորեն իրագործելու մեջ եւ գտնվում են հետախուզման մեջ: «Սումգայիթ» էջն ունի 4 բաժին` իր ենթաբաժիններով` ըստ կատարված հանցագործությունների տեսակների եւ վարչական տարածքների: Մասնավորապես «Սումգայիթ» բաժնում կարող եք ծանոթանալ հայերի սպանությունների, բռնաբարությունների, կիրառված բռնությունների եւ հափշտակությունների վերաբերյալ ականատեսների վկայություններին, տուժածների եւ իրավահաջորդների ցուցմունքներին, «Փաստաթղթեր» բաժնում` քրեական գործի նյութերն անփոփոխ արդեն իսկ գաղտնազերծված տեղեկանքներին: «Լեռնային Ղարաբաղ» բաժնում` քրեական գործի նյութերը տեղադրվել են ըստ վարչատարածքային միավորների, իսկ «Գետաշենում»` տուժածների եւ վկաների ցուցմունքները:

1980-ականների վերջերին Խորհրդային Ադրբեջանի տարածքում եւ 1990-ականների սկզբներին Լեռնային Ղարաբաղում հայերի նկատմամբ իրականացված ջարդերի կապակցությամբ հարուցված քրեական գործերի նյութերի հիման վրա էլեկտրոնային արխիվի ստեղծման աշխատանքներն սկսվել էին մոտ մեկ տարի առաջ` 2009թ. սեպտեմբերին, եւ ներառում են մի քանի հազար փաստաթուղթ: Էլեկտրոնային արխիվի ստեղծման աշխատանքներն իրականացվել են «Այլատյացության կանխարգելման նախաձեռնություն» հասարակական կազմակերպության հետ համատեղ, որին աջակցել են նաեւ մի շարք կամավորներ, իսկ ինտերնետային էջը մշակել է ծրագրավորող Արամ Մխիթարյանը: Կայքէջի տեղեկատվությունը պարբերաբար կհամալրվի քրեական գործերի նյութերով, փաստաթղթերով, ինչպես նաեւ բաժիններով: Մասնավորապես էջում առաջիկայում կավելանա «Բաքու» բաժինը, որտեղ կտեղադրվեն Բաքվից գաղթած հայ փախստականների դիմումներն ու վկայությունները` Ադրբեջանի մայրաքաղաքում` Բաքվում հայերի նկատմամբ իրականացված վայրագությունների վերաբերյալ: Վկայություններն ու ցուցմունքները տեղադրված են մասնակի կրճատումներով: Համաձայն քրեական գործերի նյութերի` հայերի նկատմամբ իրականացված ջարդերը կրել են կազմակերպված բնույթ, այդ թվում` Ադրբեջանի իրավապահ մարմինների աշխատակիցների անմիջական մասնակցությամբ` նախազգուշացնելով տեղի ազգաբնակչությանը չպատսպարել եւ չթաքցնել ազգությամբ հայ հարեւաններին` սպառնալով հակառակ պարագայում վրեժխնդիր լինել: Նկատի ունենալով, որ, ըստ վկայությունների, առանձին դեպքերում հայերին հաջողվել է փրկվել ադրբեջանցի կամ ռուս հարեւանների օգնությամբ, չեն հրապարակվում Ադրբեջանում բռնությունների ենթարկված հայերի կոնկրետ հասցեները եւ նրանց օգնության ձեռք մեկնած ադրբեջանցիների անունները` վերջիններիս անվտանգությունից ելնելով:

Հ. Ա.

# Ադրբեջանական ԽՍՀ. քարմ հիշողություն

Ինքնորոշման օտար տիրապետության տակ գտնվող ժողովուրդների ոչ միայն անօտարելի իրավունքն է, այլեւ յուրաքանչյուր պետություն պարտավոր է ապահովել այդ իրավունքի իրացումը՝ առաջին հերթին երաշխավորելով իր տիրապետության տակ գտնվող ժողովրդի քաղաքական ինստիտուտների ազատ զարգացումը: Խորհրդային Ադրբեջանի կազմում ընդգրկված Արցախի պարագայում ոչ միայն այս ժողովրդի համար քաղաքական, այլեւ ընդհանրապես զարգացման պայմանների ապահովման մասին խոսելն իսկ ավելորդ է:

Լեռնային Ղարաբաղի՝ Ադրբեջանական ԽՍՀ կազմում գտնվելու ողջ ընթացքում պետականորեն ծրագրված ու հետեւողականորեն իրականացվող էթնիկ զտումների քաղաքականությամբ այս տարածքը ոչ միայն սոցիալ-տնտեսական ու մշակութային անկում է ապրել, այլեւ հետեւողականորեն մաքրվել է իր էթնիկ բնակչությունից՝ հայերից: ԼՂԻՄ-ի (Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ) սոցիալ-տնտեսական զարգացման բնականոն ընթացքը խաթարող միջոցառումներն ուղեկցվել են հայերի հանդեպ բոլոր ուղղություններով իրագործվող խտրականությամբ: Ոտնահարվել են ազգային փոքրամասնությունների համար սահմանված բոլոր իրավունքները՝ հոգեւոր եւ մշակութային կյանքի, լեզվի զարգացման, ինքնության պահպանման, փակվել են հայկական դպրոցները, եկեղեցիներն ու վանքերը, հետապնդվել են հոգեւորականները:

Անարդար եւ խտրական վերաբերմունքը, սոցիալ տնտեսական ծանր պայմանները նպաստել են հայերի արտագաղթին այս տարածքից: Եթե 1923 թ. հայերը կազմում էին ԼՂ-ի ողջ բնակչության 94.4 տոկոսը, ապա 1989 թ. նրանց թիվը նվազեց՝ հասնելով մինչեւ 76.9 տոկոսի: ԼՂԻՄ-ից հայերի արտագաղթն ուղեկցվել է Ադրբեջանական ԽՍՀ այլ շրջաններից ադրբեջանցիների համակարգված ներհոսքով: Այս քաղաքականության հետեւանքով ադրբեջանցիների թիվը 1923 թ. 3 տոկոսից հասավ մինչեւ 21.5 տոկոսի՝ 1989 թ.:

Ղարաբաղի հայերի հանդեպ Ադրբեջանի խտրական քաղաքականության ցայտուն դրսեւորումներից է Խորհրդային Ադրբեջանի Կենտրոնական գործադիր հեղափոխական կոմիտեի 1923 թ. հուլիսի 7-ի «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կազմավորման մասին» որոշումը, որը, խախտելով 1921 թ. հուլիսի 5-ի Կավբյուրոյի որոշմամբ սահմանված աշխարհագրական եւ էթնիկ սահմանները, Լեռնային Ղարաբաղի աշխարհագրական տարածքից ԼՂԻՄ-ի կազմում բացառում է մի շարք շրջաններ, իսկ մայրաքաղաքը Շուշիից արհեստականորեն տեղափոխում Ստեփանակերտ: Այս որոշման թերեւս հիմնական նպատակներից էր ԼՂԻՄ-ն ամբողջովին Խորհրդային Հայաստանից մեկուսացնելը՝ նրա հետ ընդհանուր սահմանի բացառումը:

Հաջորդ քայլը Խորհրդային Ադրբեջանի տարածքում ազգային փոքրամասնություն համարվող հայերի՝ ինքնության եւ մշակույթի պահպանման իրավունքի խախտումն էր. 1924 թ. նոյեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մասին կանոնադրության» երկրորդ կետով ինքնավար մարզում (որտեղ, ի դեպ, ճնշող մեծամասնություն էր կազմում հայազգի բնակչությունը) իրականացվող բոլոր գործառույթների համար ամրագրվում է ոչ թե հայերենը, այլ ադրբեջաներենը:

Ադրբեջանի կողմից իրականացվող խտրական քաղաքականությունը շարունակվեց նաեւ հետագա տասնամյակներին: Երկրորդ աշխարհամարտը թերեւս հարմար առիթ էր ոչ այնքան ցանկալի ժողովրդից ազատվել փորձելու համար: Համաշխարհային պատերազմի ժամանակ ԼՂԻՄ-ից զորակոչվել է 45000 հայ՝ հայ բնակչության թվի մոտ 35 տոկոսը: Այն դեպքում, երբ զորակոչվել է ադրբեջանցիների մոտ 20 տոկոսը: Այսինքն՝ Ադրբեջանական ԽՍՀ-ն այս քայլով, ընդհանուր անհրաժեշտության ֆոնի վրա, ԼՂ-ն հայաթափելու քաղաքականություն էր վարում:

Հեյդար Ալիեւն իր հարցազրույցներից մեկում անկեղծ նշեց, որ Ստեփանակերտում բացված համալսարանի եւ ԼՂ տարածքում մի քանի գործարանների շահագործման նպատակն Ադրբեջանական ԽՍՀ-ի մյուս շրջաններից ազերիներին Լեռնային Ղարաբաղում վերաբնակեցնելն էր: Նա ավելացրել է. «Այդ եւ այլ միջոցներով ես ցանկացել եմ, որ Լեռնային Ղարաբաղում ավելի շատ լինեն ադրբեջանցիները, իսկ հայերի թիվը կրճատվի»:

Ակնհայտ է, որ ադրբեջանական պետությունը ոչ միայն չի ստեղծել բարենպաստ պայմաններ Լեռնային Ղարաբաղի ազատ եւ ժողովրդավարական զարգացման համար, այլեւ պետականորեն ծրագրել ու հետեւողականորեն իրականացրել է Լեռնային Ղարաբաղը հայաթափելու քաղաքականություն, երբեմն՝ էթնիկ զտումների, երբեմն՝ սոցիալ-տնտեսական, քաղաքական խտրականության միջոցով:

Ղարաբաղյան կարգավորման բանակցային գործընթացում այսօր Ադրբեջանը շահարկում է այսպես կոչված միջհամայնքային մոտեցումը: Բաքվի դիտարկմամբ՝ «հայկական համայնքը» կազմում են Լեռնային Ղարաբաղում բնակվող հայերը: Եթե Ադրբեջանի ճակատագիրը վճռելու հարցում պետք է հարգվի այդ տարածքից ռազմական գործողությունների հետեւանքով հեռացած ազերիների կամքը, ապա որքանո՞վ է արդարացի, եթե հաշվի չառնվի ինչպես ռազմական գործողությունների, այնպես էլ մինչեւ այդ հետեւողականորեն եւ շարունակաբար իրականացված ռեպրեսիաների եւ խտրականության հետեւանքով հայրենի տները լքած ազգաբնակչության խոսքը: Առավել եւս, որ միջազգային իրավունքն, ինչպես եւ միջազգային հանրությունն այս հարցում երբեւէ որեւէ սահման չեն գծել: Այդ է մասնավորապես վկայում ԵԽԽՎ 1059 (1995 թ. մարտի 15) բանաձեւը, որում ամրագրվում են մինչեւ 1991 թ. Ադրբեջանից խորհրդային իշխանությունների իրականացրած դաժանությունների կամ սահմանած կարգերի պատճառով իրենց բնակավայրերից հեռացած ազգաբնակչության իրավունքները:

ՍԵՎԱԿ ԳՈՄՑՅԱՆ

# Թուրքիան պահանջում է չեղյալ հայտարարել Իսրայել-Կիպրոս ծովային պայմանագիրը

Թուրքիայի փոխարտգործնախարար Ֆերիդուն Սինիրլիօղլուն երկրում Իսրայելի դեսպանորդ Գաբի Լեւիից «պարզաբանում» է պահանջել շաբաթ օրը Իսրայելի եւ Կիպրոսի ստորագրած համաձայնագրի առնչությամբ: Թուրք պաշտոնյան նաեւ պահանջել է չեղյալ հայտարարել է այդ համաձայնագիրը, որը վերաբերում է Իսրայելի եւ Կիպրոսի միջեւ ծովային սահմանագծմանը եւ երկու երկրների արանքում գտնվող նավթի ու գազի ծովային հանքավայրերի համատեղ հետախուզմանը: Սինիրլիօղլուն հայտարարել է, թե խոսքը Թուրքիայի տարածաշրջանային շահերին դիպչող դավադրության մասին է:

Համաձայնագիրը Նիկոսիայում ստորագրել են Իսրայելի ազգային ենթակառույցի նախարար Ուզի Լանդաուն եւ Կիպրոսի արտգործնախարար Մարկոս Կիպրիանուն: Վերջերս ծովում հայտնաբերված գազի հսկայական հանքավայրը պատկանում է Իսրայելին եւ գտնվում է Կիպրոսի տնտեսական գոտու անմիջական մոտակայքում, հաղորդում է «Քոլ Իսրայել» ռադիոկայանը:

Փաստաթղթի համաձայն, երկու երկրները կարող են համատեղ հետախուզել գազի ու նավթի հանքավայրերը եւ մշակել դրանք: Ավելի վաղ Կիպրոսը համանման համաձայնագրեր էր ստորագրել Եգիպտոսի եւ Լիբանանի հետ:

Իսրայելը կտրականապես մերժել է Թուրքիայի բողոքները կիպրա-իսրայելական համաձայնագրի առնչությամբ: «Խոսքը Թուրքիայի անթույլատրելի եւ անմիտ դիրքորոշման մասին է», ընդգծել է իսրայելցի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը:

Թուրքիա-Կիպրոս ծովային սահմանն անցնում է Կիպրոսից հյուսիս, մինչդեռ Իսրայել-Կիպրոս ծովային սահմանը Կիպրոսի հարավում է: Ուստի Թուրքիան որեւէ կապ չունի այս ջրատարածքի եւ տվյալ համաձայնագրի հետ: Իսրայելում կարծում են, որ Թուրքիան բողոքելիս հիմք է ընդունում իր օկուպացրած Հյուսիսային Կիպրոսը, իսկ դա «պարզապես լկտիություն է»:

# Զորավարժություն Հվ. Կորեայում, խաղաղության կոչեր ԿԺԴՀ-ում

Հարավային Կորեան երեկ զորավարժություն է սկսել Յոնփենդո կղզու շրջանում՝ ԿԺԴՀ-ի հետ սահմանազատման գծից ոչ հեռու: Հրետակոծությունն իրականացվում է մարտական արկերով: Մինչդեռ ԿԺԴՀ իշխանությունները երկրի բնակչությանը կոչ են արել խաղաղության արշավ ծավալել: Այդ մասին հաղորդում է ԻնտերՖաքս գործակալությունը:

Հարավկորեացիները զորավարժանքներ սկսեցին, չնայած ԿԺԴՀ-ն քանիցս սպառնացել էր պատասխան միջոցներ ձեռնարկել: Հյուսիսկորեական մամուլը բնակչությանը հակապատերազմյան շարժում ծավալելու եւ «նոր պատերազմի ջատագովների դավերը մերկացնելու» կոչեր է անում:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը երեկ Ռուսաստանի առաջարկությամբ դռնփակ քննարկել է Կորեական թերակղզում տիրող լարվածության հարցը: Քննարկումից հետո որեւէ փաստաթուղթ չի ստորագրվել ԱԽ 5 մշտական անդամների տարաձայնությունների պատճառով:

Թերակղզում իրադրությունը կտրուկ սրվեց նոյեմբերի 23-ին, երբ հյուսիսկորեական հրետանին գնդակոծեց հարավկորեական Յոնփենդո կղզին: Դրանից հետո հարավկորեական ուժերը մի քանի զորավարժանք անցկացրին Դեղին ծովում:

Բացի դրանից, ԱՄՆ-ը եւ Հվ. Կորեան ստեղծեցին «Ընդլայնված զսպման կոմիտե» կոչվող նոր քաղաքական մարմին: ԿԺԴՀ-ին «զսպելու» նպատակով ամերիկացիներն իրենց դաշնակից հարավկորեացիներին կհատկացնեն մարտավարական եւ ռազմավարական միջուկային մարտալիցքեր, ինչպես նաեւ սովորական զինատեսակներ:

ԲԵԼԱՌՈՒՍ

# Լուկաշենկոն հաղթել է, բայց իրավիճակն անհանգիստ է

Լույս երկուշաբթի գիշերը Բելառուսի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակել է կիրակնօրյա նախագահական ընտրությունների արդյունքները: Բոլոր քվեարկությունների մշակումից հետո պարզվել է, որ գործող նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն ստացել է քվեների 79,67 տոկոսը: 2006-ի նախագահական ընտրություններում նա ստացել էր 83 տոկոս, նշում է ՌԻԱ գործակալությունը:



ԿԸՀ-ի նախագահ **Լիդիա Երմոշինան** հայտարարել է, որ ընտրողների 6,47 տոկոսը քվեարկել է բոլոր թեկնածուների դեմ:

Նախագահության մյուս թեկնածուներից Անդրեյ Սաննիկովը ստացել է 2,56 տոկոս, Վլադիմիր Նեկլյաեւը՝ 1,7, Յարոսլավ Ռոմանչուկը եւ Գրիգորի Կոստուսեւը՝ 1,97, Վիտալի Ռիմաշեւսկին՝ 1,1, Վիկտոր Տերեշչենկոն՝ 1,08, Նիկոլայ Ուստինովիչը՝ 1,04, Ալես Միխալեւիչը՝ 1,2, Դմիտրի Ուսը՝ 0,48 տոկոս:

Ընդդիմությունը վիճարկում է ընտրությունների արդյունքները եւ կիրակի օրվանից բողոքի բազմամարդ ցույցեր է անում: Անկախության հրապարակով անցած եւ կառավարության տան առջեւ հավաքված հազարավոր ցուցարարներին ցրել են հատուկ ջոկատների եւ ներքին զորքերի զինծառայողները:

Բելառուսական կայքերը հաղորդում են, որ ընդդիմադիր թեկնածուների մեծ մասին ծեծել են, կալանավորել, ոմանք հայտնվել են հիվանդանոցներում: Ենթադրվում է, որ նրանց կներկայացվեն պետական հեղաշրջման մեղադրանքներ: Հատուկ ծառայությունները խուզարկություններ են անցկացրել թեկնածուների շտաբներում, իրավապաշտպանների գրասենյակներում, «Խարտիա-97» կայքի խմբագրությունում եւ որոշ այլ խմբագրություններում:

Ցուցարարների եւ օմոնականների բախումների ընթացքում տուժել են մեկ տասնյակ լրագրողներ (այդ թվում՝ ռուսաստանցի), հաղորդում է ԻնտերՖաքս գործակալությունը: Երեկ լարված իրադրությունը պահպանվում էր:

ՄՈՍԿՎԱ

# Անկարգությունների մասնակիցները մեկնեցին բանակ

Անցած հանգստյան օրերի ընթացքում Մոսկվայում ձերբակալվել է 1454 հոգի, որոնցից 317-ը՝ անչափահաս: Այս մասին հաղորդում են ռուսական լրատվամիջոցները՝ մեջբերելով ՌԴ մայրաքաղաքի ոստիկանության պետ Վիկտոր Բիրյուկովի խոսքերը: Բիրյուկովը նշել է, որ ձերբակալվածներից 200-ը բանակից խուսափած անձնավորություններ են, եւ նրանց անմիջապես «գործուղել են բանակ»:

Մասսայական անկարգությունները Մոսկվայում՝ համեմատաբար փոքր մասշտաբներով, շարունակվում են: Հիշեցնենք՝ «Սպարտակ» Մոսկվա ֆուտբոլային ակումբի համակիր Եգոր Սվիրիդովի սպանությունից հետո, որի համար մեղադրվում է հյուսիսկովկասցի երիտասարդ, տեղի են ունենում լուրջ բախումներ «ֆուտբոլային» երկրպագուների ու կովկասցիների միջեւ: «Տարօրինակորեն», սակայն, «ֆուտբոլային երկրպագուների բանակը» կազմված է բացառապես սլավոնական արտաքինով երիտասարդներից: Դեկտեմբերի 11-ին Կրեմլին հարակից Մանեժնայա հրապարակում, այնուհետեւ՝ դեկտեմբերի 15-ին Կիեւյան կայարանի մերձակա հրապարակում ազգայնամոլ զանգվածը «Առաջ Ռուսաստան», «Ռուսաստանը՝ միայն ռուսներին» կարգախոսներով հարձակվել եւ բախումների մեջ է մտել «կովկասյան արտաքինով» երիտասարդների, այդ թվում՝ անտեղյակ անցորդների հետ»: Արդարության համար նկատենք, որ վերջիններիս՝ ծայրահեղականորեն տրամադրված զանգվածը նույնպես հրահրել է ազգամիջյան բախումների: Ռուսական որոշ աղբյուրները պնդում են անգամ, որ հատուկ այդ նպատակով Մոսկվա են եկել «ավտոբուսներ՝ տասնյակ հազարավոր երիտասարդներով՝ Հյուսիսային Կովկասից»: Վերջին օրերին Մոսկվայի ու նաեւ մերձմոսկովյան ոստիկանությունը, այլ ուժային կառույցները, այդ թվում՝ ՕՄՕՆ-ը, աշխատում են խստացված ռեժիմով: Այժմ քաղաքում անկարգություններ չկան, սակայն լարվածությունը որոշակիորեն պահպանվում է:

Ինչ վերաբերում է «անկարգներով բանակը համալրելուն», ապա այս հանգամանքը խոսում է միայն ռուսական բանակի խնդիրների մասին: Ինչպես ավելի վաղ տեղեկացրել էր ՌԴ պաշտպանության նախարարությունը, այս տարվա հոկտեմբերի 1-ից դեկտեմբերի 31-ը ձգվող աշնանային զորակոչի ընթացքում նախատեսված էր բանակ զորակոչել շուրջ 280 հազար երիտասարդների՝ 18-27 տարեկան: Սակայն նոյեմբերի վերջին տվյալներով ռուսական բանակ են զորակոչվել միայն մոտ 200 հազարը՝ այն էլ պաշտոնական տվյալներով: Ընդ որում, ինչպես նկատել է ՌԴ Պետդումայի անվտանգության հարցերով հանձնաժողովի ներկայացուցիչ Սերգեյ Աբելցեւը այսօրվա տվյալներով դեռեւս 200 հազար երիտասարդներ խուսափում են բանակային ծառայությունից: BBC-ի ռուսական ծառայությունը մեջբերում է ռուսաստանցիների միջեւ անցկացված սոցիալական հարցման արդյունքները, որ ռուսաստանցիների կեսից ավելին չի ցանկանում, որ հարազատները ծառայեն բանակում՝ «հաշվի առնելով ռուսական բանակում տիրող «դեդովշչինայի» առկայությունը, ինչպես նաեւ դասալքության զգալի տոկոսը»: Ի դեպ, վերոհիշյալ խնդիրների լուծումը շատ ռուս իրավաբաններ ու գործիչներ տեսնում են պայմանագրային ծառայության անցնելու մեջ, միեւնույն ժամանակ ՌԴ պաշտպանության նախարարությունը դեռեւ չի ցանկանում անցում կատարել պայմանագրային ծառայությանը՝ պահպանելով պարտադիր ծառայության սկզբունքը:

Հ. ԱՓՅԱՆ

# «Իմ երգերը «անխիղճ ձեւով» լքում են ինձ ու դառնում ժողովրդի սեփականությունը», ասում է մաեստրոն

ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, երգահան, դիրիժոր, մաեստրո **Վլադիլեն Բալյանը** բոլորեց իր ստեղծագործական գործունեության 65 եւ ծննդյան 85-ամյակները: Այդ առիթով Ալ. Սպենդիարյանի անվան ազգային օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնում կազմակերպվել էր հոբելյանական երեկո: Միջոցառման ընթացքում ներկայացվեց նրա կյանքն ու գործունեությունը, հնչեցին կոմպոզիտորի ստեղծագործությունները տարբեր սերնդի երգիչների կատարմամբ, եղան ողջույնի ուղերձներ՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի, կոմպոզիտորների միության կողմից: ՀՀ մշակույթի նախարարության «Ոսկե մեդալը» Վլադիլեն Բալյանին հանձնեց փոխնախարար Արթուր Պողոսյանը եւ մաղթեց ստեղծագործական հաջողություններ: Ջերմ էր ու բարեկամական ՀՀ-ում Լիբանանի դեսպան Ժուբրաիլ Ժաարայի ողջույնի եւ գնահատանքի խոսքը հոբելյարին, հատկապես նրա՝ Հայաստան-Լիբանան ընկերության նախագահի իրականացրած կարեւորագույն ծրագրերի շուրջը: Հոբելյարը շնորհակալական խոսք հղեց երեկոյի կազմակերպիչներին, հատկապես հատուկ նշելով իր ստեղծագործությունները մշտապես հոգու խորքում պահելու եւ հնչեցնելու համար:



Օրերս «**Ազգը**» հյուրընկալեց կոմպոզիտոր Վլադիլեն Բալյանին: Նրա հետ զրույցն ընթացավ մտերմիկ մթնոլորտում: Ինչպե՞ս եւ ե՞րբ արթնացավ նրա սերն ու նվիրումը երաժշտության նկատմամբ, պրն Բալյանը մեկիկ-մեկիկ վերհիշեց: «Ես փոքրուց մեծացել եմ առանց հոր: Ծնողներս շատ շուտ են բաժանվել եւ գեղեցկուհի մայրս՝ Անաստյա Բալյանը, հրաշալի ձայն ուներ, երգում էր: Սակայն իր ողջ կյանքը նվիրեց ինձ: Նա կարող էր հայտնի երգչուհի դառնալ, որովհետեւ նրան լսել ու հավանել էին մեծանուն կոմպոզիտորներ Ռոմանոս Մելիքյանը, Թաթուլ Ալթունյանը: Մայրս իմ ծնված օրվանից երազել էր, որ ես կոմպոզիտոր դառնամ, ու ջանք չի խնայել, որ երաժշտական դպրոցում սովորեմ, որը չհաջողվեց»:

Չնայած փոքրիկ Վլադիլենի համար մայրը անգամ դաշնամուր էր վարձել, որ նվագել սովորեր, սակայն Վլադիլեն Բալյանին միայն 17 տարեկանում է բախտը ժպտում՝ հանդիպում է իր առաջին երաժշտության ուսուցչին, երաժշտագետ Կոնստանտին Մելիք-Վրթանեսյանին, որն էլ լսելով երիտասարդի վալսերը, ֆոկստրոտները, երգերը, հավանում է նրան ու օգնում, որ առանց երաժշտական կրթության ընդունվի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի կոմպոզիտորական բաժինը: Տարիներ անց, Վ. Բալյանը հանդիպում է իր երկրորդ ուսուցչին՝ Թաթուլ Ալթունյանին, ավարտում նրա դասարանը որպես խմբավար: Սակայն կոմպոզիտոր դառնալու երազանքը նրան մշտապես հետապնդել է: «Եվ ահա երրորդ անգամ բախտը ժպտաց ինձ եւ ես հանդիպեցի կոմպոզիտոր Գրիգոր Եղիազարյանին ու իմ երազանքն իրականացավ: Արդեն ասացի, որ մայրս գեղեցիկ երգում էր, մորեղբայրս՝ Ռաֆայել Վիրաբյանը, ժողովրդական ու գուսանական երգերի փայլուն կատարող էր: Հենց նրանցից էլ ես փոքրուց լսել ու սիրել, կապվել եմ երգին, այդ միջավայրում մեծացել: Մեր ընտանիքը դարձել է երաժշտագետների մի ընտանիք: Կինս Տաճաս Խաչվանքյանի դուստրն է, քույրս՝ Մերի Աբրահամյանը, երգչուհի է, թոռներս՝ երաժիշտներ են: Մեծ թոռս՝ Միքայելը, միջազգային մրցույթների դափնեկիր է, դաշնակահար, միջնեկը՝ Տիգրանը, ջութակահար, աղջիկս՝ Նաիրեն, նկարիչ է, եւ նրա զավակը՝ Հարությունը երկու ամիս առաջ ընդունվեց Համբուրգի կոնսերվատորիան, տղաս՝ Կարենը, Մոսկվայում ՀՀ ճարտարապետների միության նախագահն է... »:

Եվ այսպես, երաժիշտների, արվեստագետների ընտանիքում այժմ մեծանում է Վլադիլեն Բալյանի ծոռը՝ Եղիշեն ու արդեն մեծ հոր պես ծլնգծլնգացնում է դաշնամուրի ստեղների վրա եւ գուցե մի օր էլ նա դառնա շարունակողը այդ գերդաստանի նախասիրությունը: Ահա այդ միջավայրում, այդ երաժշտական աշխարհում կրթվեց ու հարստացավ Վլադիլեն Բալյանի հոգին ու այսօր նա իր հետեւում է թողել 85 երկար տարիներ, որոնց արդյունքում այսօր ունենք կոմպոզիտորի երաժշտական հարուստ հավաքածու:

Անկրկնելի մի գործ է Վ. Բալյանի «Ամբոխները խելագարված» պոետորիան Եղ. Չարենցի խոսքերով, որի հրաշալի մեկնաբանությունը երաժշտասերների դատին հանձնեց մաեստրո Հովհ. Չեքիջյանը: Բազմաթիվ կամերային, երգչախմբային գործերը, բալետային սյուիտ «Հազարան բլբուլ», ռոմանսներ, երգեր ու անիմաստ՝ գրված Ավ. Իսահակյանի, Չարենցի, Կապուտիկյանի, Շիրազի, Համո Սահյանի, Էմինի, Սեւակի, Տերյանի ու ռուս բանաստեղծների բառերով:

Եվ ինչպես Վ. Բալյանն էր նշում. «Ես մշտապես ոգեւորվել եմ այդ դասականներով, որոնց տողերը արդեն ապահովում էին իմ երգերի գլխավոր թեւը: Իսկ որպես սկզբունք ես առանց պոեզիայի երգ չեմ գրում, քանի որ հենց պոեզիայում կա թաքնված մեղեդի, որը կարողանում եմ ունկնդրել, դարձնել երաժշտական ստեղծագործություն: Եվ ինչպես Շիրազն էր ասում. «Երգի երկրորդ թեւ, որով այն թռչում է, դա պոեզիան է...», ու իմ երգերը թեւեր առնելով թռչում են, լքում ինձ, դառնում ժողովրդի սեփականությունը: Իսկ դրանից լավ ու մեծ գնահատանք, կարծում եմ, չկա, քանզի երգեր ունեմ, որոնք 59 տարի երգում են տարբեր սերնդի ներկայացուցիչներ եւ դրանք հենց ժողովրդինն են ու շատ ժամանակ այդ երգերը ներկայացվում են որպես ժողովրդական երգեր»:

Չնայած տարիքին, այսօր էլ կոմպոզիտոր Վլադիլեն Բալյանը ջերմեռանդ ստեղծագործում է, ու նրա վերջին գործերն են Համո Սահյանի բանաստեղծությունների հիման վրա գրված ձայնի, նվագախմբի եւ երգչախմբի «Հայաստան ասելիս...» եւ «Գարունը հայերեն է գալիս...» ձայնի, բլուլի, դուդուկի համար ստեղծագործությունները: Մաղթենք մաեստրոյին ստեղծագործական նոր վերելքներ ու մնայուն, արժեքավոր նոր գործեր հայ երաժշտարվեստում:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

ՎԱՆԱՁՈՐ

# Հայաստանի գրողների միության Լոռու մարզային բաժանմունքը տոնեց իր նորամուտը

## Առաջին միջոցառումը նվիրված էր Լենա Անթառանյանի հոբելյանին

**Դեկտեմբերի 17-ին Վանաձորի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատում բացվեց Հայաստանի գրողների միության Հովհ.Թումանյանի անվան Լոռու մարզային բաժանմունքի նոր տարածքը, որի առաջին հանդիսությունը նվիրված էր բանաստեղծուհի Լենա Անթառանյանի 60-ամյա հոբելյանին: Մեկ տարի առաջ Վանաձորի քաղաքապետի գլխավորությամբ ավագանին որոշում կայացրեց մշակույթի պալատում առանձին մուտքով ընդարձակ տարածք հատկացնել Լոռու մարզային բաժանմունքին: Տարածքը վերանորոգվեց, կահավորվեց մի շարք բարերարների ու աջակիցների շնորհիվ:**

**Երկար սպասված այս միջոցառմանը ներկա էին բարձրաստիճան հյուրեր, մարզկենտրոնի մտավորականներից եւ արվեստագետներից շատերը: Նրանց ողջունեց եւ հանդիսությանը ներկա գտնվելու համար շնորհակալություն հայտնեց Հայաստանի գրողների միության Լոռու մարզային բաժանմունքի նախագահ, բանաստեղծ Մանվել Միկոյանը:**



**- Բաժանմունքն ստեղծվել է 1957-ին՝ արձակագիր Նոր-Այրի ջանքերով: Նա եղել է առաջին նախագահը: Նոր-Այրի ու ավագ սերնդի ներկայացուցիչների՝ Վալտեր Թոռոսյան, Մելս Սանթոյան, Ռազմիկ Պողոսյան, Սերո Անտոնյան եւ այլք, յուրօրինակ ավանդույթներ ու ստեղծագործական մթնոլորտ է ձեւավորվել: Այդ ավանդույթները շարունակվում են նաեւ այսօր՝ նոր շունչ ու երանգ ստանում,- ասաց Մ.Միկոյանը: Մասնաճյուղի գործունեության նպատակով տարածք հատկացնելու, վերանորոգելուն աջակցություն ցուցաբերելու համար նա բոլոր մտավորականների անունից երախտագիտություն հայտնեց Վանաձորի քաղաքապետարանին, ավագանուն, Լոռու մարզպետարանին, ՀՀ գրողների միության նախագահ Լեւոն Անանյանին, «Կանանկա» շինարարական կազմակերպությանը՝ ի դեմս Հայկ Հովիվյանի, ով կատարել է ներդրումների շուրջ 60 տոկոսը, Հայ Ավետարանչական ընկերակցությանը՝ վերապատվելի Ռենե Լեւոնյանի գլխավորությամբ, ՀՀ սոցիալական ապահովության պետական հիմնադրամի նախագահ Վազգեն Խաչիկյանին, Լեզվի պետական տեսչության պետ Սերգո Երիցյանին, Աժ պատգամավոր Կարեն Սարիբեկյանին, գործարար Արմեն Սարուխանյանին, ովքեր թեկուզ փոքր ներդրումներով, բայց պատրաստակամություն են հայտնել աջակցելու այսօրինակ շնորհակալ գործին:**

**- Բազմաթիվ ծրագրեր կան, որոնք կյանքի կկոչվեն մասնաճյուղի նորաբաց տարածքում եւ, համոզված եմ, մշտապես մեր կողքին կլինեն մարդիկ, ովքեր պատրաստ են զորավիգ լինելու գրողների տարաբնույթ նախաձեռնություններին,- նշեց Մ. Միկոյանը:**

**- Դժվար ճանապարհ անցավ գրողների միության մարզային բաժանմունքը, սակայն ի վերջո գտավ իր վերջնական հանգրվանը,- ասաց Լոռու մարզպետ Արամ Քոչարյանը: - Գտնվեցին մարդիկ, ովքեր կարողացան հնարավորությունների սահմաններում օգտակար լինել:**

**Այս տարին հիրավի մշակութային էր, կարելի է ասել՝ աննախադեպ, հագեցած մշակութային միջոցառումներով, որի մասնակիցն են եղել մեզնից շատերը: Միջոցառումները եզրափակվում են այս գեղեցիկ արարողությամբ, որի մի մասն է կազմում նաեւ բանաստեղծուհի Լենա Անթառանյանի հոբելյանը: Այս առիթով ուզում եմ բարեմաղթել, որ նա միշտ մեր կողքին լինի,- ասաց Լոռու մարզպետ Արամ Քոչարյանը: Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը, ով ներկա է լինում Լոռու մարզային բաժանմունքի կազմակերպած գրեթե բոլոր միջոցառումներին, պատրաստակամություն է հայտնում օգնելու նախաձեռնություններին, տարածքի տրամադրման գործում նաեւ իր մեծ ավանդն է ունեցել: Նա նույնպես շնորհավորեց լոռեցի գրողներին՝ ձեռքբերման կապակցությամբ:**

**- Լոռու մարզային բաժանմունքը կարծես կրկնեց մեր ժողովրդի ճակատագիրը: Կարծում եմ՝ նոր տարածք որոնելու կարիք այլեւս չի լինի: Ուզում եմ խոստովանել, որ հանրապետության մյուս մարզերում եւ Արցախում գործող բաժանմունքների թվում, այս բաժանմունքն ունի լավագույն գրական ներուժը,- ասաց նա՝ հանձնելով Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից տրամադրված համակարգիչ նվիրելու համաձայնագիրը:**

**Մարզային մասնաճյուղի տարածքի բացման ժապավենը կտրելու պատիվն ընձեռվեց Արամ Քոչարյանին եւ Լեւոն Անանյանին: Միջոցառումը շարունակվեց գեղեցիկ ու ճաշակով վերանորոգված տարածքում: Ինչպես ներկայացրին հանդիսությունը վարող երիտասարդ բանաստեղծուհի Նաիրա Ձուլհակյանը եւ արձակագիր, դրամատուրգ, դերասան Էլֆիք Զոհրաբյանը՝ միջոցառման երկրորդ հատվածը նվիրված էր Լենա Անթառանյանի ծննդյան 60-ամյա հոբելյանին: Նրան շնորհավորեց եւ բեղմնավոր ստեղծագործական կյանք մաղթեցին Մանվել Միկոյանը, Լեւոն Անանյանը (նա հոբելյարին հանձնեց ՀԳՄ «Գրական վաստակի համար» մեդալ, Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանը, գրականագետ Մելս Սանթոյանը, Վանաձորի պատվավոր քաղաքացի Հայկ Օհանյանը, դրամատուրգ, երգիծաբան Սամվել Խալաթյանը, բանաստեղծ Ռազմիկ Պողոսյանը, բանաստեղծ-թարգմանիչ Խորեն Գասպարյանը եւ ուրիշներ:**

**Լենա Անթառանյանին եւս մեկ հաճելի անակնկալ էր սպասվում. ՀՀ մշակույթի նախարարության ներկայացուցիչ Կարո Վարդանյանը նրան հանձնեց նախարարության «Ոսկե մեդալ»:**

**Մ. Միկոյանը եւ Լ.Անթառանյանը բազմաթիվ շնորհավորանքներ ստացան բաժանմունքի նոր տարածքի բացման եւ հոբելյանի առթիվ:**

**ԱՆՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ**



# Հայազգի նոր կինոաստղը՝ Անժելա Սարաֆյան

«Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի նոյեմբերի 13-ի փոխանցմամբ՝ հայազգի Անժելա Սարաֆյանը Թիայի դերով կհամալրի Սթեֆանի Մեյերի «Մթնշաղյան սաք» վերնագրով վամպիրների մասին գրված շարքի արյունարբուների քանակը: Երկումասանոց «Լուսաբացին» ֆիլմը աշխարհի կինոթատրոններում ցուցադրվելու է 2011-12 թվերին:

Սարաֆյանը ծնվել է 1983 թվականին եւ ցարդ դերեր է ստանձնել Kabluey (2007), The Informers (2008) եւ Speed Demons (2010) ֆիլմերում: Հանդես է եկել նաեւ «Իսթվիք», «Սխալ գիծ» եւ «Սերը ցավ է» հեռուստասեսային ֆիլմերում:

Ներկայումս, բացի վերոնշյալ «Վամպիրի» դերից, Անժելան նկարահանվում է նաեւ ռեժիսոր Մաք դ'Էլիասի «Ամերիկյան անասուն» ֆիլմում:

Հ. Ծ.



# Մարզական

## Ավետիք Գրիգորյանը նվաճեց գլխավոր մրցանակը



Հայաստանի այս տարվա չեմպիոն Ավետիք Գրիգորյանը գերազանց հանդես եկավ Բուլղարիայի Բանսկո քաղաքում անցկացված շախմատի միջազգային մրցաշարում, որին մասնակցում էին 116 շախմատիստներ: Անցկացված 9 պարտիաներում վաստակելով 8 միավոր, Ավետիք Գրիգորյանը դարձավ մրցաշարի հաղթող: Նա 19-ով ավելացրեց իր ընթացիկ վարկանիշը՝ հասցնելով 2599-ի:

Ավետիք Գրիգորյանը հենց մրցաշարի մեկնարկից հաջող մրցելույթների շնորհիվ տեղ զբաղեցրեց առաջատարների շարքում: Նա բավական հաջող անցկացրեց նաեւ վերջնագիծը՝ վերջին 4 տուրերում վաստակելով 3,5 միավոր: 6-րդ տուրում Ավետիքը հաղթեց իր հետ աղյուսակը գլխավորող ուկրաինացի Պյոտր Կորոբկովին: Հաջորդ տուրում նա հաշտություն կնքեց իսրայելցի միջազգային վարպետ Տամիր Նաբատուի հետ:

Վճռորոշ նշանակություն ունեցան հայ շախմատիստի հաջող ելույթներն ավարտական 2 տուրերում: 7-րդ տուրից հետո Գրիգորյանը Տամիր Նաբատուի հետ 6 միավորով գլխավորում էր աղյուսակը: 8-րդ տուրում երկու առաջատարներն էլ հաղթեցին ու վաստակեցին 7-ական միավոր: Գրիգորյանը սպիտակներով պարտության մատնեց Բորիս Սավչենկոյին, իսկ Նաբատուն սեւերով առավելության հասավ Իոանիս Նիկոլաիդիսի նկատմամբ:

Հաղթողին պետք է որոշեր ավարտական տուրը: Ավետիք Գրիգորյանին հաջողվեց սեւերով պարտության մատնել Վլադիմիր Գեորգիեւին ու վաստակել 8 միավոր: Իսկ ահա նրա գլխավոր հակառակորդ Տամիր Նաբատուն բուլղարացի Իվան Չեպարինովի հետ մրցավեճն ավարտեց ոչ-ոքի եւ 7,5 միավորով զբաղեցրեց 2-րդ տեղը: 7 միավորով 3-րդ մրցանակակիր դարձավ բուլղարացի Գրիգոր Գրիգորովը:

Մրցաշարի մասնակիցների մեջ 6-րդ վարկանիշն ունեցող Ավետիք Գրիգորյանն, իրոք հիանալի խաղաց: Նա մնաց անպարտելի՝ 9 պարտիաներից շահելով 7-ը, 2-ն ավարտելով ոչ-ոքի: Բացի Նաբատուից, Գրիգորյանի հետ մրցավեճում կես միավոր վաստակեց նաեւ Բրանիմիր Մախիմովիչը:

## Հոպկինսի երազանքն անկատար մնաց



45-ամյա ամերիկացի պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Բեռնարդ Հոպկինսին չհաջողվեց պատմության մեջ մտնել որպես ամենատարեց աշխարհի չեմպիոն: Կանադայում կիսածանրքաշային կարգում WBC/The Ring վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն, 28-ամյա կանադացի բռնցքամարտիկ Ժան Պասկալի հետ կայացած մենամարտում մրցավարները ոչ-ոքի արդյունք գրանցեցին: Իսկ դա նշանակում է, որ Ժան Պասկալը պահպանեց տիտղոսը:

Առաջին ռաունդում Հոպկինսը հայտնվեց ռինգի հատակին, երբ Պասկալի հարվածը դիպավ նրա գլխի հետեւի մասին: Թեեւ Հոպկինսի բողոքին, մրցավարը նոկդաուն գրանցեց: 3-րդ ռաունդում կանադացին կրկին Հոպկինսին նոկդաունի ենթարկեց: Սակայն դա չընկճեց ամերիկացուն, որը շարունակում էր գրոհել: 4-րդ ռաունդում Հոպկինսը եւս մեկ անգամ հայտնվեց ռինգի հատակին, սակայն այս անգամ մրցավարը նոկդաուն չգրանցեց, այլ Պասկալին զգուշացրեց, քանի որ նա հարվածել էր ծոծրակին: 6-րդ եւ 7-րդ ռաունդներում Պասկալը զգալիորեն նվազեցրեց ակտիվությունը եւ Հոպկինսը վստահ շահեց այդ ռաունդները:

11-րդ ռաունդում արդեն Պասկալը հայտնվեց ռինգի հատակին, սակայն մրցավարը նոկդաուն չգրանցեց, քանի որ Հոպկինսը հարվածի պահին հրել էր մրցակցին: Վերջին ռաունդն անցավ երկուստեք գրոհներով:

Վիճակագրության համաձայն, Պասկալի 353 հարվածներից 105-ն էին դիպուկ, իսկ Հոպկինսը 445 հարվածներից 171-ն էր նպատակին հասցրել: Մրցավարներից մեկը 114-112 հաշվով հաղթանակը շնորհել էր Հոպկինսին, մյուս երկուսն ոչ-ոքի էին արձանագրել (114-114, 113-113): Մրցավարների ձայների մեծամասնությամբ գրանցվեց ոչ-ոքի: Բնականաբար, Հոպկինսը դժգոհ էր նման որոշումից, գտնելով, որ հաղթանակն իրենից պարզապես գողացան: Իսկ Պասկալը հայտարարել է, որ պատրաստ է Հոպկինսին ռեւանշի հասնելու հնարավորություն ընձեռել:

## 10 մլն դոլար ձայնի համար

**Ամերիկացի լրագրող Ջոնաթան Էլտերը հայտարարել է, որ ՖԻՖԱ-ի գործկոմի անդամները Քաթարի օգտին քվեարկելու դիմաց 10 մլն դոլար են ստացել այդ երկրի ներկայացուցիչներից: Newsweek-ի առաջատար քաղաքական մեկնաբաններից մեկը գտնում է, որ լրատվամիջոցները պետք է հետեւեն ՖԻՖԱ-ի գործկոմի անդամներին ու պարզեն, թե Քաթարից ստացած գումարները ինչպես եւ որտեղ են ծախսելու: Նշենք, որ Քաթարը 2022-ի աշխարհի առաջնության կազմակերպման համար 80 մլն դոլարի բյուջե է կազմել: Իսկ Քաթարի հայտը ներկայացնողներից մեկը՝ Զինեդին Զիդանը կազմկոմիտեից 15 մլն եվրո է ստացել հաղթանակի առթիվ: Ճիշտ է, դա կաշառք համարել չի կարելի:**

**Քաթարի աշխարհի առաջնությանը վերաբերող հարցերը ծագում են ոչ միայն լրագրողների մոտ: Գլխավոր խնդիրը ամռանը Քաթարում տիրող անտանելի շոգն է, ջերմաստիճանը ստվերում կարող է անցնել 40 աստիճանը: Այս առնչությամբ արդեն իր անհանգստությունն է արտահայտել Ասիայի ֆուտբոլի կոնֆեդերացիան, որը ՖԻՖԱ-ին առաջարկել է առաջնությունն անցկացնել ձմռանը: Կոնֆեդերացիայի գլխավոր քարտուղար Պիտեր Վելապանը համոզված է, որ մարզադաշտերում տեղադրված սառնավորումները ի վիճակի չեն լինի ապահովելու նորմալ ջերմաստիճան, որի պատճառով եվրոպական մի շարք երկրներ թերեւս հրաժարվեն առաջնության մասնակցությունից: Իհարկե, առայժմ վաղ է խոսել այն մասին, թե 12 տարի անց կայանալիք ֆուտբոլի աշխարհի առաջնությունը երբ կանցկացվի: Բնական է, որ ձմռան ամիսներին առաջնության անցկացումը նպատակահարմար չէ եվրոպական մի շարք երկրներին, որոնցում ազգային առաջնություններն աշուն-գարուն մրցակարգով են անցկացվում: Հայտնի է, որ Աֆրիկայի եւ Ասիայի ֆուտբոլի առաջնություններն անցկացվում են ձմռանը, ինչը եվրոպական մի շարք ակումբների սրտովը չէ, քանի որ նրանք գրեթե մեկ ամսով ստիպված են լինում հրաժարվել այդ մայրցամաքների ներկայացուցիչների ծառայություններից, որոնք իրենց երկրների հավաքականների կազմում մասնակցում են նշված մրցաշարերին:**

## Շախմատային թագը կուղեւորվի Չինաստան

**Երկամյա ընդմիջումից հետո շախմատի կանանց առաջնության թագը կրկին կուղեւորվի Չինաստան: Աշխարհի ուժեղագույն շախմատիստուհու տիտղոսը Թուրքիայում ընթացող աշխարհի առաջնության եզրափակիչում 4 պարտիայից բաղկացած մրցախաղում կվիճարկեն չինացիներ Ռուան Լուֆեյը եւ Հոու Յիֆանը:**

**Ռուան Լուֆեյը լրացուցիչ մրցախաղում 2,5-1,5 հաշվով պարտության մատնեց իր հայրենակցուհի Չժաո Սյուեին, իսկ Հոու Յիֆանը 1,5-0,5 հաշվով առավելության հասավ հնդիկ գրոսմայստեր Համպի Կոներուի նկատմամբ: Շատերի համար 23-ամյա Ռուան Լուֆեյի հաջողությունն անակնկալ է:**

**Տեղեկացնենք, որ աշխարհի առաջին չինացի չեմպիոնուհին Սե Ցզյունն էր, որը 1991-ին շախմատային թագը խլեց Մայա Չիբուրդանիձեից: 1996-ին նա իր տիտղոսը զիջեց հունգարուհի Ժուժա Պոլգարին, սակայն 3 տարի անց կրկին դարձավ ուժեղագույնն աշխարհում՝ հաղթելով Ալիսա Գալյամովային: Հետագայում աշխարհի չեմպիոնուհու տիտղոսը վիճարկվեց նոկաուտ մրցակարգով: 2000-ին Սե Ցզյունը եզրափակիչում հաղթեց իր հայրենակցուհի Ցին Կանյինին: 2001-ին նոկաուտ մրցակարգի հաղթող ճանաչվեց չինացի մեկ այլ շախմատիստուհի՝ Ժու Չենը: 2004-ին ուժեղագույնը Անտուանետա Ստեֆանովան էր: 2 տարի անց շախմատային թագը կրկին ուղեւորվեց Չինաստան: Հաղթողը Սյու Յուհուան էր: Աշխարհի առայժմ վերջին չեմպիոնուհին ռուսաստանցի Ալեքսանդրա Կոստենյուկն է, որն անհաջող խաղաց Թուրքիայում:**

**ՖՈՒՏԲՈԼ**

## «Ինտերը» նվաճեց աշխարհի ուժեղագույն թիմի տիտղոսը



**Ֆուտբոլի Եվրոպայի չեմպիոնների գավաթակիր Միլանի «Ինտերը» դարձավ աշխարհի թիմային առաջնության չեմպիոն: Աբու Դաբիում անցկացված աշխարհի առաջնության եզրափակիչ խաղում «Ինտերը» 3-0 հաշվով պարտության մատնեց Աֆրիկայի չեմպիոնների գավաթակիր «Մազեմբեին», որը մրցաշարի գլխավոր անակնկալն էր մատուցել՝ պայքարից դուրս մղելով բրազիլական «Ինտերնասիոնալին»:**

**«Ինտերն» արդեն առաջին խաղակեսում վճռեց հանդիպման ելքը: 13-րդ րոպեին հաշիվը բացեց Պանդեւը, 4 րոպե անց աչքի ընկավ Էտո՛Օ-ն: Խաղավարտից 5 րոպե առաջ Բյաբյանին 3-րդ գոլը խփեց մրցակցի դարպասը: Այս հաղթանակը կարեւոր էր հատկապես «Ինտերի» գլխավոր մարզիչ Ռաֆայել Բենիտեսի համար, որի աշխատանքից ակումբի ղեկավարությունը դժգոհ է: Սակայն, չնայած հաջողությանը, ըստ The Daily Mail-ի, Բենիտեսը շուտով պաշտոնանկ կարվի:**

## Զավեն Անդրեասյանը նպաստեց Վաշիե-Լագրավի հաջողությանը

**Վարշավայում ավարտված կայծակնային եւ արագ շախմատի Եվրոպայի առաջնություններում Հայաստանը ներկայացրին Զավեն Անդրեասյանը, Հրայր Սիմոնյանը եւ Վահե Բաղդասարյանը: Մասնակիցների թվում էր նաեւ Սլովակիայում բնակվող Սերգեյ Մովսիսյանը:**

**Մրցաշարի առաջին օրը 334 շախմատիստներ վիճարկեցին կայծակնային շախմատի Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: Անցկացվեց 13 տուր, ընդ որում մրցակիցները միմյանց հետ հանդիպեցին երկու անգամ սեւ եւ սպիտակ խաղաքարերով: Այս մրցաշարում լավագույն արդյունքի հասավ ֆրանսիացի գրոսմայստեր Մաքսիմ Վաշիե-Լագրավը, որը 26 հնարավորից վաստակեց 22 միավոր: 2-րդ տեղը գրաված ուկրաինացի Վասիլի Իվանչուկը հաղթողից հետ մնաց 2 միավորով: 3-րդ տեղը 19,5 միավորով զբաղեցրեց ուկրաինացի մեկ այլ գրոսմայստեր՝ Ռուսլան Պոնոմարյովը: 18,5 միավորով 4-րդը Սերգեյ Մովսիսյանն էր:**

**Հայաստանցի շախմատիստներից լավագույն արդյունքը ցույց տվեց Զավեն Անդրեասյանը, որը 17,5 միավորով գրավեց 17-րդ հորիզոնականը: Նա 2 պարտիաներում էլ առավելության հասավ Պաուլինա Կագարայի, Յուլիա Կոչետկովայի, Վլադիմիր Շմիդտի, Վասիլի Իվանչուկի, Ռենե Սթերնի նկատմամբ: Զավենը 1,5 միավոր վաստակեց Ալեքսանդր Ռյազանցեւի եւ Ալեքսանդր Շիմանովի հետ պարտիաներում: Սերգեյ Մովսիսյանի, Վիտալիս Սամոլինսի, Էռնեստո Ինարկիեւի եւ Դարիուշ Շվիրցի հետ մրցախաղերում Անդրեասյանն իր օգտին մեկական միավոր գրանցեց: Իսկ ահա ադրբեջանցի Վուղար Հաշիմովի հետ երկու պարտիաներում հայ շախմատիստը կես միավոր վաստակեց: Բոլորից անհաջող Անդրեասյանը խաղաց մրցաշարի հաղթող Մաքսիմ Վաշիե-Լագրավի հետ՝ 7-րդ տուրում 2 պարտիաներում էլ պարտություն կրելով մրցակցից: Փաստորեն, հենց Անդրեասյանն էլ շատ բանով նպաստեց ֆրանսիացու հաջողությանը, քանի որ բացի նրան 2 միավոր պարգեւելուց, 2 պարտիաներում էլ հաղթել էր Վաշիե-Լագրավի գլխավոր հակառակորդ Վասիլի Իվանչուկին:**

**Վահե Բաղդասարյանը 14,5 միավորով 94-րդն էր, իսկ Հրայր Սիմոնյանը 14 միավորով գրավեց 114-րդ տեղը:**

**Մրցաշարի հաջորդ երկու օրերին 723 շախմատիստներ պայքարի մեջ մտան արագ շախմատի Եվրոպայի չեմպիոնի տիտղոսի համար: Այստեղ պայքարն ավելի թեժ բնույթ կրեց: Անցկացրած 13 տուրից հետո (մրցակիցները միայն մեկ պարտիա էին միմյանց հետ խաղում) միանգամից 6 շախմատիստներ՝ հունգարացի Զոլթան Ալմաշին, ուկրաինացիներ Վասիլի Իվանչուկն ու Անտոն Կորոբովը, ադրբեջանցի Վուղար Հաշիմովը, Իսպանիան ներկայացնող Ալեքսեյ Շիրովը եւ Գերմանիայի ներկայացուցիչ Արկադի Նայդիչը վաստակեցին հավասար՝ 10,5-ական միավոր:**

**Մրցակարգի համաձայն, նրանց միջեւ կայծակնային մրցախաղ անցկացվեց: Նախնական փուլում Հաշիմովը հաղթեց Նայդիչին, Շիրովը պարտության մատնեց Կորոբովին: Կիսաեզրափակիչում Ալմաշին առավելության հասավ Շիրովի նկատմամբ, իսկ Հաշիմովը պայքարից դուրս մղեց Իվանչուկին: Եզրափակիչում Ալմաշին հաղթելով Հաշիմովին, հռչակվեց Եվրոպայի չեմպիոն: 3-րդ տեղը գրավեց Իվանչուկը՝ պարտության մատնելով Շիրովին:**

**Սերգեյ Մովսիսյանը 10 միավորով գրավեց 12-րդ տեղը: 9,5 միավորով 16-րդ տեղը գրավեց Զավեն Անդրեասյանը: Հրայր Սիմոնյանը 9 միավորով գրավեց 58-րդ տեղը, իսկ Վահե Բաղդասարյանը 8 միավորով զբաղեցրեց 128-րդ հորիզոնականը:**

## Տիգրան Ղարամյանը հաջող է մեկնարկել

Ֆրանսիական Նանսի քաղաքում մեկնարկել է շախմատի միջազգային մրցաշար, որի մասնակիցներն ընդամենը 5 օրում 9 տուր կանցկացնեն: Հաջող է մեկնարկել ֆրանսահայ շախմատիստ Տիգրան Ղարամյանը, որը մասնակիցների շրջանում ամենաբարձր անհատական վարկանիշն ունի (2650): Մեկնարկային 2 տուրերում էլ Ղարամյանը հաղթել է՝ առավելության հասնելով Մարիո Մանչինիի եւ Չարլզ Մոնրոյի նկատմամբ:

2 տուրից հետո Ղարամյանը նույնքան միավորով Աքսել Դելորմեի, Քրիստիան Բաուերի, Ադամ Հունտի, Մաթիե Կորնետի, Պիեռ Լե Ռուքսի, Թոռնիկե Սանիկիձեի, Նիկոլաս Բրուների եւ Գաբրիել Բատագլինի հետ գլխավորում է աղյուսակը:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

## Օրվա հետքերով

# Տնտեսական աճը հունվար-նոյեմբերին՝ 2,6 տոկոս

### *Աճի տեմպը փոքր-ինչ բարձրացավ*

**Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության հրապարակած 2010-ի հունվար-նոյեմբեր ամիսների օպերատիվ սոցիալ-տնտեսական ցուցանիշների համաձայն, Հայաստանի տնտեսական աճը կազմել է 2,6 տոկոս: Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կազմել է մոտ 3 տրիլիոն 104 մլրդ դրամ: Հիշեցնենք, որ տնտեսական աճը, սկսած մայիսից, 8,8 տոկոսից նվազեց եւ հունվար-հոկտեմբերին հասավ 2,4 տոկոսի: Թեեւ նոյեմբեր ամսին հոկտեմբերի նկատմամբ գրանցվել է 5,4 տոկոս անկում, այդուհանդերձ, 11 ամիսների արդյունքում, համեմատած նախորդ տարվա 11 ամիսների հետ, տնտեսական աճի տեմպի նվազումը դադարեց եւ անգամ փոքր չափով բարձրացավ:**

**Ըստ տնտեսության ճյուղերի, ցուցանիշները հետեւյալ են: Արդյունաբերությունում աճի տեմպը պահպանվում է՝ կազմելով 9,8 տոկոս: Այստեղ նոյեմբերին հոկտեմբերի նկատմամբ եւս աճ է արձանագրել՝ 7,6 տոկոսով: Էլեկտրաէներգիայի արտադրությունը հունվար-նոյեմբերին աճել է 14,4 տոկոսով, բայց նոյեմբերին հոկտեմբերի նկատմամբ 16,2 տոկոս անկում է արձանագրվել: Շինարարությունում անկման տեմպը նվազել է՝ կազմելով 3,8 տոկոս, եւ նոյեմբերին հոկտեմբերի նկատմամբ արձանագրվել է 11,4 տոկոս աճ: Գյուղատնտեսության ոլորտում անկումը կազմել է 14,5 տոկոս, իսկ նոյեմբերին՝ հոկտեմբերի նկատմամբ, 42,2 տոկոս: Այս ճյուղը շարունակում է մնալ ամենամեծ անկում արձանագրածն այս տարվա ընթացքում: Ծառայությունների ոլորտում 2010-ի հունվար-նոյեմբերին արձանագրվել է 6,6 տոկոս աճ, սակայն այստեղ եւս նոյեմբերին հոկտեմբերի նկատմամբ անկում է արձանագրվել՝ 4,5 տոկոսով: Մանրածախ առեւտրում արձանագրվել է 0,5 տոկոս աճ, իսկ նոյեմբերին հոկտեմբերի նկատմամբ 1,8 տոկոս անկում:**

**Միջին աշխատավարձը Հայաստանում բարձրացել է 7,2 տոկոսով եւ գերազանցել 106 հազար դրամը: Պետական հատվածում միջին աշխատավարձը կազմում է մոտ 85,5 հազար դրամ, իսկ մասնավորում՝ գրեթե 133 հազար դրամ: Առաջինում աճը կազմել է 4,1 տոկոս, երկրորդում՝ 7,5 տոկոս:**

**Արտաքին առեւտրաշրջանառությունն ավելացել է 18,9 տոկոսով եւ կազմել 4 մլրդ 226 մլն դոլար: Նոյեմբերին հոկտեմբերի համեմատ աճն այստեղ կազմել է 14,4 տոկոս:**

**Արտահանումը կազմել է 896 մլն դոլար՝ աճելով 41,2 տոկոսով: Նոյեմբերին հոկտեմբերի նկատմամբ նույնպես արտահանումն աճել է՝ 15,3 տոկոսով:**

**Ներմուծումը կազմել է 3 մլրդ 370 մլն դոլար, աճելով 14,2 տոկոսով: Նոյեմբերին հոկտեմբերի նկատմամբ ներմուծման ավելացումը նույնպես 14,2 տոկոս է կազմել:**

**Արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը շարունակել է մտահոգիչ լինել, քանի որ շարունակում է խորանալ՝ կազմելով մոտ 2 մլրդ 474 մլն դոլար:**

**Այսպիսով, այս տարվա 11 ամիսների ցուցանիշները ցույց են տալիս, որ Հայաստանի տնտեսությունը որոշակի կայունացման շրջան է մտել: Տարեկան արդյունքերով, ամենայն հավանականությամբ, տնտեսական աճի ցուցանիշը փոքր-ինչ բարձր կլինի: Սակայն եկող տարվա ընթացքում արդեն տնտեսական աճի նման ցուցանիշը բավարար կամ, առավել եւս, լավ համարվել չի կարող:**

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

### ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱՁԵՎ

# Միացյալ Նահանգներ՝ շահերի՞, թե՞ արդարության ուղիով

*1-ին էջից*

Օբաման հայտարարել է, որ ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունները «առավել քան երբեւէ կարեւոր են», ու թեեւ տվյալ դեպքում որպես ենթատեքստ մատուցվում են WikiLeaks-յան բացահայտումները ամերիկա-թուրքական հարաբերությունների առնչությամբ, հստակ է, որ նախորդ կիրակի արված հարցազրույցը չէր կարող անուղղակի չվերաբերել նաեւ Հայոց ցեղասպանության բանաձեւին:

Այս ամենով հանդերձ, առավելապես վերլուծական գնահատականներում բանաձեւին կողմ քվեարկելու դիտարկումները հենվում են այն մոտեցման վրա, թե ԱՄՆ հայկական լոբբիին կարող են միանալ նաեւ այլ նմանատիպ ուժեր: Այդ պարագայում է, որ թեեւ Ներկայացուցիչների պալատն այս տարի կարող է գումարել իր վերջին նիստը, իսկ հաջորդ տարվանից արդեն Նենսի Փելոսին չի գլխավորի ԱՄՆ Կոնգրեսի այս ստորին պալատը, բայց բանաձեւի ընդունումը կարող է մնալ օրակարգային:

Ամերիկայի հայկական համագումարն, իր հերթին, շարունակում է աշխատել բանաձեւի ընդունման ուղղությամբ, հանդիպումներ ու քննարկումներ ունենալով քվեարկության մասնակիցների հետ: Դրա դեմ գործունեություն են ծավալում նաեւ ԱՄՆ-ում գործող թուրքական քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, որոնք ԱՄՆ-ում բնակվող թուրքերի հետ «ոչ» քվեարկելու պահանջով դիմելու են այն կոնգրեսականներին, որոնք կմասնակցեն Ներկայացուցիչների պալատի քվեարկությանը:

Միեւնույն ժամանակ, այս ամենին ԱՄՆ-Ադրբեջան հարաբերություններն են փորձում «շաղկապել» ադրբեջանցիները: «Ազերիպրես» գործակալության տեղեկություններով, ԱՄՆ-ում ապրող ադրբեջանցիները հանդես են եկել հաղորդագրությամբ եւ սպառնացել ԱՄՆ-ին, հայտարարելով, թե Ցեղասպանության բանաձեւի քվեարկությունը ոչ միայն կվնասի ԱՄՆ-Թուրքիա, այլեւ ԱՄՆ-Ադրբեջան հարաբերություններին, այդպիսով սպառնալիքի տակ կդրվեն ամերիկյան շահերը Հարավային Կովկասում: Վրացիներից ավելի ամերիկամետ են, ստացվում է, իրենց զգում ամերիկաբնակ ադրբեջանցիները...

# «Վիվասել-ՄՏՍ»-ը ներդրեց 4-րդ սերնդի նոր ցանց Հայաստանում

### *Ռալֆ Յիրիկյանի հավաստմամբ՝ մի քանի ամիս անց ցանցը մատչելի կլինի զանգվածային օգտագործման համար*

Հայաստանը երեկ հայտնվեց աշխարհի այն 10 երկրների ցանկում, որտեղ գործում է 4-րդ սերնդի կամ 4G/LTE հեռահաղորդակցության ցանցը: Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանի, տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանի եւ այլ հյուրերի ներկայությամբ «Վիվասել-ՄՏՍ» ընկերության գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը** ցուցադրեց LTE մոդեմի Երեւանի տարածքում փորձնական գործարկումը: Ցուցադրմանը զուգահեռ, ընկերության գլխավոր տնօրենը տեղեկացրեց, որ դեռ 2009-ին հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշեց թույլ տալ «Վիվասել-ՄՏՍ»-ին կառուցել 4G ցանցը: Այս ընթացքում ընկերությունը բանակցություններ վարեց մատակարար ընկերությունների՝ Ericsson-ի եւ Huawei-ի հետ եւ սկսեց կառուցել ցանցը: Ինչպես հայտնեց Ռալֆ Յիրիկյանը, ներկայումս Երեւանի երկու շրջաններում՝ Կենտրոնում եւ Արաբկիրում գործարկվելուց հետո, ընկերությունը կզարգացնի ցանցը եւ կտարածի Երեւանի մնացած մասի, ապա Գյումրիի եւ Վանաձորի, 1-2 տարում՝ նաեւ Հայաստանի ամբողջ տարածքի վրա: Ընկերության ղեկավարն ընդգծեց նաեւ, որ տարածաշրջանի ոչ մի երկրում այս տեխնոլոգիան ներդրված չէ: «4G-ի մասին խոսելիս, երբ նշեն ԱՄՆ-ի կամ Շվեդիայի մասին, կնշեն նաեւ Հայաստանի մասին», փաստեց Ռալֆ Յիրիկյանը:

Տեղեկացվեց, որ 4G/LTE նոր սերնդի շարժական հեռահաղորդակցության տեխնոլոգիան թույլ է տալիս տվյալների փոխանակման միջոցով մատուցել որակապես նոր եւ ավելի մեծ թողունակություն պահանջող ծառայություններ: Այն օժտված է բարձր արագությամբ, հաճախականությունների առավելագույն օգտագործելու հնարավորությամբ եւ բարձր արդյունավետությամբ: Առավել մանրամասնելով, «Վիվասել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրենը հայտնեց, որ մինչեւ 2011-ի մարտ ամիսը կտեւի նոր սերնդի ցանցի փորձարկումը, որից հետո արդեն մատչելի կդառնա զանգվածային օգտագործողների համար: Ծառայության սակագների մասին եւս կհայտարարվի այդ ժամանակ, թեեւ Ռալֆ Յիրիկյանը խոստացավ, որ 3G-ից ավելի թանկ չի լինի:

Հայաստանի վարչապետ **Տիգրան Սարգսյանն** իր ելույթում այն համոզմունքը հայտնեց, որ 4G տեխնոլոգիաների մուտքը Հայաստան կխթանի մեր երկրում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը: Նա այս նախաձեռնությունն օրհնակելի համարեց եւ նշեց, որ այն մղում է ոլորտում նոր ներդրումներ կատարելուն:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# «Արդշինինվեստբանկում»՝ եւս 2 միջազգային դրամական փոխանցումների համակարգեր

**Ինչպես տեղեկացանք «Արդշինինվեստբանկի» մամուլի ծառայությունից, բանկում սպասարկվող միջազգային դրամական փոխանցումների համակարգերի թիվն ավելացավ երկուսով: Այսուհետեւ բանկի բոլոր 55 մասնաճյուղերի եւ գլխավոր գրասենյակի հաճախորդները հնարավորություն կունենան ԱՄՆ դոլարով, ՌԴ ռուբլով եւ եվրոյով աշխարհի տարբեր երկրներ դրամական փոխանցումներ կատարելու Coinstar եւ Blizko միջազգային համակարգերով:**

**Ըստ «Արդշինինվեստբանկի» վարչության նախագահ Ներսես Կարամանուկյանի՝ նոր համակարգերի ներդրմամբ բանկն ավելի ամրապնդեց իր դիրքերը Հայաստանի բանկային համակարգի միջազգային դրամական փոխանցումների ոլորտում: «Մենք այն սակավաթիվ բանկերից ենք, որտեղ ներդրված են եւ հաջողությամբ գործում են այսքան մեծ թվով միջազգային դրամական փոխանցումների համակարգեր», նշել է բանկի վարչության նախագահը:**

**Ա. Մ.**

PRODECO
PROPERTY DEVELOPMENT COMPANY

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԼԻՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ**

«Ամերիա» ընկերությունների խմբի կազմի մեջ մտնող «Փրոփերթի Դիվելոփմենթ Քամփնի» ՓԲԸ-ն հայտարարում է Երեւան քաղաքում պրեմիում դասի բազմաֆունկցիոնալ համալիրի ճարտարապետական հայեցակարգի մշակման մրցույթ:

Մրցույթի ծրագիրը եւ պայմանները կարելի է ներբեռնել ներքոհիշյալ էլեկտրոնային հասցեից՝ ներմուծելով օգտագործողի անունը եւ նշանաբառը.

user: **tender@prodeco.am**
pass: **tender**

կամ ստանալ ք.Երեւան, Բաղրամյան 6/2 հասցեում գտնվող կազմակերպության գրասենյակից, հեռ.՝ 583346; 524040:

## Եթե ԱՊՊԱ, ապա ԻՆԳՈ

**ԱՊՊԱ պայմանագրեր ձեռք բերելու ժամկետի ավարտին մնացել է 10 օր:**

**«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ»**
**ապահովագրական ընկերությունը կատարում է պայմանագրերի ձեւակերպում:**

- **ՀՀ, ք. Երեւան, Տպագրիչների 8**
- **ՀՀ, ք. Երեւան, Դեմիրճյան 38**
- **ՀՀ, ք. Երեւան, Վ. Սարգսյան 20** հասցեներով:
- **www. ingoarmenia.am կայքում**
- **010-59-21-21 թեժ գծով:**
- **Telcell տերմինալների միջոցով**

Ինչպես նաեւ գործում է ԱՆՎՃԱՐ առաքում:

**«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ»**
**Մենք վճարում ենք: Մի՛շտ***

** համաձայն ապահովագրության պայմանագրի եւ պայմանների:*

## Նկարչական ցուցահանդես

**Սուքիաս Թորոսյանի վերջին ստեղծագործություններից**

### Սրբապատկերների շարք

**Տեղի կունենա դեկտեմբերի 24-ին, ժամը 15.00-ին Թեքեյան կենտրոնում (Խանջյան 50):**
**Ցուցահանդեսը վայելում է Հայաստանում Բուլղարիայի դեսպանատան աջակցությունը:**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝20.12.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: